

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ինչպես Վատնուած Են Ֆրանսահայերու Յատկացուած Միլիոնները

Շատերու համար մեծ անակնկալ էր Մարտ 23-ին, «Լոս Անճելըս Թայմզ» թերթի կայքին վրայ տեսնել լայնածաւալ յօդուած մը, որ կ'անդրադառնար ֆրանսական AXA ապահովագրական ընկերութեան կողմէ ֆրանսահայութեան յատկացուած 17.5 տոլար գումարի մսխումին եւ որոշ պարագաներուն իրացումին մասին՝ Հայ փաստաբաններուն եւ անոնց հետ առնչուող այլ անհատներուն կողմէ:

Հետաքննող լրագրողներ՝ Հերրիէթ Ռայնի եւ Մէթ Հեմիլթընի ստորագրութեամբ լոյս տեսած յօդուածը կը կրէ «Արեան Գումարի» դաւաճանութիւնը. Ինչպէս փտածութիւնը խանգարեց Ցեղապանութեան Հայ գոհերու հատուցումը» խորագիրը:

Յօդուածագիրները, որոնք նախկին իրենց հետաքննութիւններուն համար արժանացած են Ամերիկեան լրագրութեան մէջ ամենէն բարձր՝ «Փուլիթցըր» մրցանակին, նախ կը պատմեն Հայկական Ցեղասպանութեան գոհերու ենթարկուած ճակատագրի մասին եւ ապա կը խօսին 2000 թուականի կէսերուն Ամերիկեան «Նիւ Եորք Լայֆ» եւ Ֆրանսական AXA ապահովագրական ընկերութիւններուն դէմ Քալիֆորնիոյ մէջ բացուած դատերուն, որոնք կը պահանջէին հատուցում տալ այս երկու ընկերութիւններուն մօտ ապահովագրուած եւ ապա Ցեղապանութեան գոհ դարձած Հայերու ժառանգորդներուն:

Փաստաբաններ՝ Վարդգէս Եղիայեան, Մարք Կիրակոս եւ Պրայըն Քափաթէք յաջողած են համաձայնութեան գալ այդ երկու ընկերութիւններուն հետ, անոնցմէ ապահովելով 37.5 միլիոն տոլարի հատուցում: Յօդուածագիրները կը հաստատեն որ, «Նիւ Եորք Լայֆ» ընկերութեան կողմէ յատկացուած 20 միլիոն տոլարը ճիշդ ձեւով բաշխուած է ժողովուրդին: Սակայն երբ հերթը եկած է Ֆրանսական ընկերութեան 17.5 միլիոն տոլար գումարին, որ պետք էր յատկացուէր ֆրանսահայ անհատներու եւ բարեսիրական հաստատութիւններու, տեղի ունեցած է մեծ գումարներու կորուստ: Այլեւայլ պատճառներով մերժուած են Ֆրանսահայերու դիմումներու 92 տոկոսը, ապա կեղծ փաստաթուղթեր կազմելով մեծ գումարներ փոխանցուած են անհատական հաշիւներու մէջ եւ կամ տրուած են հաստատութիւններու,


Ատրպէյճանը Հող Կը Պատրաստէ Լեռնային Ղարաբաղի Ուղղութեամբ Նոր Սադրանքներու Համար. Կը Յայտարարէ Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդը

Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդը քննարկած է Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած անվտանգային իրավիճակը՝ զայն գնահատելով խիստ լարուած:

Անվտանգութեան Խորհուրդը նշած է, որ իրադրութեան վերլուծութիւնը ցոյց կու տայ, որ Ատրպէյճանը, փորձելով գտնել մտացածին հիմնաւորումներ, հող կը նախապատրաստէ Լեռնային Ղարաբաղի ուղղութեամբ նոր սադրանքներ եւ յարձակում սկսելու համար, այդ շարքին՝ Հայաստանը մեղադրելով խաղաղութեան պայմանագրի հարցով ապակառուցողական գործողութիւններու մէջ:

Անվտանգութեան Խորհուրդը եւս մէկ անգամ վերահաստատելով Հայաստանի աւելի վաղ հնչեցուցած դիրքորոշումը, Ատրպէյճանին կ'առաջարկէ անյապաղ բանակցութիւններ սկսել համապարփակ խաղաղութեան պայմանագրի շուրջ:

«Անվտանգութեան Խորհուրդը, միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրահրելով Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստան-Ատրպէյճան սահմանին ռազմական բախումներին հնարաւորութեան վրայ, անհրաժեշտ է համարում միջազգային զսպման մեխանիզմները գործարկուելը՝ տարածաշրջանում նոր ռազմական մագլցո-



Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի նիստը՝ վարչապետի եւ նախագահի գլխաւորութեամբ

յին Ղարաբաղում եւ Հայաստան-Ատրպէյճան սահմանին ռազմական բախումներին հնարաւորութեան վրայ, անհրաժեշտ է համարում միջազգային զսպման մեխանիզմները գործարկուելը՝ տարածաշրջանում նոր ռազմական մագլցո-

ղութիւն եւ ցեղային գտում թոյլ չտալու համար», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդին պատասխանելով Պա-

Հայ-Ամերիկեան Թանգարանի Շքեղ Ընդունելութիւնը Ցարդ Հանգանակուած է 28 Միլիոն Տոլար



Հայ-Ամերիկեան Թանգարանի միջոցառումի պաշտօնական արարողութեան ընթացքին

Համավարակի պատճառով քանի մը տարիէ ի վեր չեղած գումարած Հայ-Ամերիկեան Թանգարանի աւանդական միջոցառումը տեղի ունեցաւ անցեալ Կիրակի Մարտ 27-ին, 2022, Լոս Անճելըսի Մարիոթ Հիւրանոցի սրահին մէջ: Աւելի քան հազար հոգիներու ներկայութիւնը, բացառիկ երեւոյթ մը պարզած էր, քանի որ մեր գաղութը նման խճանկարային տեսարաններու առջեւ չէր գտնուած երկարատեւէ մը ի վեր...:

Ընդարձակ եւ համապարբակ սրահն օժտուած էր մեծադիր եւ լայնապատաստ գեր-արդիական հեռուստապատուաններով, հաղորդակցութիւնը աւելի մատչելի դարձնելու համար:

Ճաշկերոյթ-ընդունելութեան ընթացքին գործադրուեցաւ ինք-

նատիպ եւ պատշաճ յայտագիր մը, որուն գործադրութիւնը ձեռնհասօրէն վարեց Հայ-Ամերիկեան Թանգարանի հոգաբարձութեան գործադիր տնօրէն Շանթ Սահակեան: ԱՄՆ-ի եւ Հայաստանի պետական հիմներու ունկնդրութեանէն ետք՝ ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեցին Արցախի 44 օրուան պատերազմին եւ վերջին օրերուն նահատակուած զինուորներու յիշատակը:

Հայ-Ամերիկեան Թանգարանի հոգաբարձուներու խորհուրդի գործադիր նախագահ Պերճ Կարապետեան հակիրճ գեկուցով մը ողջունեց ներկաները եւ ամփոփ ձեւով ներկաները իրագեկ դարձուց Թանգարանի շինութեան գործընթացի մա-

Ուաշինկթըն Սադրիչ, Անպատասխանատու Կը Որակէ Ատրպէյճանի Քայլերը

«Ուաշինկթըն ուշադրութեամբ կը հետեւի 2020 թուականի Նոյեմբերէն չեղած շփման գիծին վրայ հաստատուած իրավիճակին: Միացեալ Նահանգները խորապէս մտահոգուած է Ատրպէյճանի զօրքերու տեղաշարժերով: Զօրաշարժերը եւ սրումի տանող այլ միջոցառումները անպատասխանատու են եւ անհարկի սադրիչ», - յայտարարած է ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը:

Ուրբաթ օր կայացած ասուլիսի ժամանակ ամերիկեան արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակի գլխաւոր տեղակալ Զաւինա Փորթլըր լրագրողի հարցին ի պատասխան անդրադարձած էր Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հետ պետական փոխ քարտուղար Քերըն Տոնֆրիտի Մարտ 24-ի հեռախօսազրոյցներուն: Տոնֆրիտ, ըստ Փորթլըրի, «Միայն վերահաստատած է Մարտ 21-ին եւ 22-ին վարչապետ Նիկոլ Փաշինեանին, ինչպէս նաեւ նախագահ Իլհամ Ալիեւին պետական քարտուղար էնթոնի Պլինքընի ըսածը, որ կոչ կ'ընեն երկու կողմերուն զսպուածութիւն ցուցաբերել եւ կրկնապատկել դիւանագիտական ներգ-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սադրիչ Գործողութիւնները ՌԴ-ի Դէմ Են

ԱՐՍԵՆ ՎԱՐՊԱՆԵԱՆ

Արցախի Փառուիս գիւղի ուղղութեամբ արցախա-ատրպէյճանական շփման գիծը Ատրպէյճանի զինուորի կողմից խախտելու փաստը 2020 թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան հիմնական դրոյթի կոպիտ խախտում է: Այն կատարուում է ՌԴ խաղաղապահ առաքելութեան պատասխանատուութեան գոտում: Այս երկու փաստը խօսում են մէկ բանի մասին՝ պաշտօնական Պաքուն Մոսկովայի դէմ դէմարզ է իրականացնում:

Ատրպէյճանական ուժերը փաստացի ներխուժել են այն տարածք, որտեղ ռուս խաղաղապահները եռակողմ յայտարարութեան հիման վրայ ապահովում են անվտանգութիւն եւ հրադադարի ռեժիմի պահպանման վերահսկողութիւն: Այլ կերպ ասած՝ Ատրպէյճանը, օգտուելով ռուսական ճգնաժամից, որ Ռուսաստանի ուշագրութիւնը սեւեռուած է այնտեղ ծաւալուող յատուկ ռազմական գործողութիւնների վրայ, խախտում է մի պայմանագրի պահանջ, որտեղ ՌԴ-ն ոչ միայն կողմ, այլև դրա կատարման երաշխաւորն է: Ատրպէյճանական մամուլով Ռուսաստանի սատարելու եւ հակառուսական քարոզչութիւն ծաւալելու Պաքուի բացառապէս չլերի համապատկերին Փառուիսի ուղղութեամբ շփման գիծը խախտելու գործողութիւնները լիովին օրինաչափ են: Այս դէպքն ամբողջութեամբ տեղափոխուում է Մոսկովայի տիրոջ, քանի որ Պաքուն իր գործողութիւններով սկսում է աշխարհին եւ Ռուսաստանին ազդակներ ուղարկել, թէ Հարաւային կովկասում նրա ազդեցութիւնը, մեղմ ասած, այն չէ, ինչ ամբար-

ուած է փաստաթղթերում:

Ռուսաստանի հակամարտութիւնից ընդամենը երկու օր առաջ Ռուսաստանն Ատրպէյճանի հետ դաշնակցային պայմանագիր ստորագրեց հենց վերոնշեալ երկու խնդիրների՝ Ռուսաստանի օգտին գործողութիւններից Պաքուն գերծպահելու եւ իր խաղաղապահ առաքելութեան գոտում կայուն իրավիճակ ունենալու համար: Պաքուն այսօր փաստացի խախտում է հենց այս հիմնական պայմանները:

Ատրպէյճանն իր այս գործողութիւնները գուզակցում է անորակ քարոզչութեամբ: Վերջինիս ռուսական մէտ քառուստի հետեւանքով ռուսական մամուլում ոչ պատահական, արդէն նպատակաւոր կառուցուած կարծիքներ են շրջանառուում, թէ Ռուսաստանից յետոյ ՌԴ յաջորդ թիրախը կը լինի Ատրպէյճանը: Սրան ի պատասխան Ատրպէյճանի քարոզչամեքենան իր մամուլի էջերում առաջնորդող վերլուծականներ է հրատարակում, որոնց վերնագրերում ասում է, թէ ՌԴ-ի յաջորդ թիրախը միջինասիական երկրներից որեւէ մէկն է լինելու: Պարզ է, որ ակնյայտ արհեստական ու հիմքեր չունեցող նման թէզ հրատարակ բերելով՝ պաշտօնական Պաքուն պարզունակ քայլ է կատարում իր հակառուսական գործողութիւնները քողարկելու եւ իրեն ուղղուած ռուսական մամուլի ակնարկների սուր ծայրն իրենից հեռացնելու համար:

Այդ քարոզչական հնարքն այնքան մերկ է, որ ցանկացած տրամաբանող անհատի մէջ բանական տարակուսանք կ'առաջացնի, թէ ո՞ւմ համար է այն ընդհանրապէս յօրինուել: Միամտութիւն կը լինէր կարծելը, թէ

նման հրատարակումներով ՌԴ-ն կը համոզուի, որ Ատրպէյճանն իր դէմ չի աշխատում, այլ միջինասիական ինչ-որ երկիր է աշխատում: Միանշանակ է, որ Ատրպէյճանն ուղղուած են բացառապէս Ռուսաստանի դէմ, քանի որ Ռուսաստանից դուրս ՌԴ պատասխանատուութեան որեւէ գոտում ստատուս քուոյի դէմ կամ իրավիճակի լարմանն ուղղուած ցանկացած գործողութիւն չի բխում ՌԴ-ի շահերից: Ռուսաստանի հակամարտութեան համապատկերին նոյնիսկ Սիրիայում է իրավիճակն էականորէն հանդարտուել, այն դէպքում, երբ Հարաւային կովկասում Ատրպէյճանը փորձում է ամէն կերպ լարել այն՝ զազատարը պայթեցնել-փակելով եւ շփման գիծը խախտելով:

Միւս կողմից էլ Պաքուի այս քայլերը լիովին տեղաւորում են Արեւմուտքի կողմից Ռուսաստանի դէմ իրականացուող բազմափեկտոր գործողութիւնների համատեքստում, եւ գերագոյն ցանկութեան դէպքում էլ Մոսկովայի կարող այն չնկատել եւ հաշուի չառնել, առաւել եւս, որ Ռուսաստանի Ռադան սոցիալական ցանցի իր պաշտօնական էջում հասցրել է ողջունել ատրպէյճանական զինուորի՝ Արցախի գիւղեր ներթափանցելու գործողութիւնները:

Պաքուն այս անգամ ցերեկը առանց կրակոցի խախտեց Նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանաւորուածութիւնները: Լաւ ծանօթ լինելով Ատրպէյճանի նենգ գործելանոճին՝ ենթադրում ենք, որ այդ քայլը հետախուզական էր, նա ստուգում է ՌԴ արձագանքը, եւ եթէ ռուսական համարժէք պատասխանը չլինի իր դէմ ուղղուած այդ

սադրանքին, ապա վաղը դրան հետեւելու են աւելի ակրեսիւ եւ արհամարհական քայլեր: Այստեղ «ռուսական արջի» համբերատարութեան մասին թէզը չի աշխատի, քանի որ իրադարձութիւնների արագ զարգացումներն այդ հնարաւորութիւնը չեն տալիս, միւս կողմից էլ հենց Պոստինն է յայտարարել, որ եռակողմ յայտարարութիւնների դրոյթների չկատարումը դէպի պատերազմ տանող ուղիղ ճանապարհ է:

Մարտի 25-ի գիշերը, իր գործելանոճին հաւատարիմ, Ատրպէյճանը նաեւ կրակեց Արցախի Հանրապետութեան ՊԲ զինուորի ուղղութեամբ՝ օգտագործելով ԱԹՍ-ներ, ինչին հետեւել են նաեւ հայկական կողմի պատասխան գործողութիւնները, եւ ինչի արդիւնքում ատրպէյճանացիները կորուստներ են կրել: Ատրպէյճանական կողմի նման սադրանքներին հայկական կողմի պատասխանն անխուսափելի էր: Մինչ այս Արցախի պաշտպանութեան բանակը, հետեւելով եռակողմ յայտարարութեան դրոյթներին եւ յարգելով ՌԴ խաղաղապահ առաքելութեան ներկայութիւնը, չէր պատասխանում ատրպէյճանական զինուած ուժերի գործողութիւններին: Պաքուի նման քայլերի շարունակումը կը բերի օրինաչափ հակազդեցութեան, իրավիճակի շիկացման, ինչն անխուսափելիօրէն կ'ենթադրի ՌԴ միջամտութիւն՝ իր բոլոր հետեւանքներով:

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ »

Հայաստանի Խօսքը Փոխել Իրավիճակը

ՅԱԿՈԲ ԲԱՐԱՆԵԱՆ

Յետպատերազմեան ամբողջ ժամանակահատուածում տեղի ունեցող պարբերական սրացումները, տարբեր ուղղութիւններով թէ Հայաստանի սահմանի, թէ Արցախի շփման գծի հրադադարի խախտումները, զոհերը, տարաբնոյթ շանտաժը առաջացնում են միանգամայն հիմնաւոր հարց, թէ որքանով է տրամաբանական եւ հիմնաւոր այդ ամէնից յետոյ խաղաղութեան օրակարգի մասին խօսելը: Եւ թուում է, որ պատասխանը պարզապէս միարժէք է՝ ինչ խաղաղութիւն, եթէ հակառակորդ, թէ թշնամի պետութիւնը բացարձակապէս պատրաստ չէ դրան եւ խօսում է բոլորովին այլ լեզուով: Խնդիրը սակայն ունի թերեւս աւելի խորութեամբ եւ շերտերով դիտարկելու կարիք ու անհրաժեշտութիւն: Եւ բանն ամենեւին խաղաղութեան օրակարգը հիմնաւորելը չէ, այլ հայկական մարտավարութեան արդիւնաւէտութեան հեռանկարը հասկանալը: Եթէ Հայաստանը չի օսի խաղաղութեան օրակարգից, ապա հագիւ թէ դա որեւէ բան փոխի իրերի ներկայիս դրութեան եւ ուժերի յարաբերակցութեան համառոտութեամբ: Որովհետեւ ուժերի յարաբերակցութիւնն այնպիսին է, որ գոնէ այսօր շատ քիչ բան է կախուած Հայաստանի

Փոխել, Թե՞ Անցնել

Գործի Եւ

ՏՆՈՒՄ ԲԱՐԱՆԵԱՆ

հետորաբանութիւնից: Աւելին, Հայաստանի «համարժէք» հետորաբանութիւնը Ատրպէյճանի համար ժամանակի ընթացքում ստեղծելու է իր շանտաժի եւ մարտաշունչ հետորաբանութեան «լեզուի մասին» հնարաւորութիւն, երբ իքս պահից այլեւս հական չի լինելու, թէ ում մարտաշունչ հետորաբանութիւնը որից է բխում, ով էր առաջինը եւ այլն: Միջազգային հանրութեանը այդ ամէնը գործնականում հետաքրքիր չէ: Ըստ այդմ, Հայաստանի խնդիրը ոչ թէ հետորաբանութիւնը փոխելն է, այլ քաղաքական իրավիճակը: Իսկ քաղաքական իրավիճակը հնարաւոր է փոխել գործով, ոչ թէ խօսքով: Գործ թէ դիւանագիտական-քաղաքական դաշտում, եւ թէ Հայաստանի տնտեսական ու պաշտպանական կարողութիւնների քայլ առ քայլ աւելացման: Երբ արւում է այդ գործը, խաղաղութեան օրակարգի մասին խօսակցութիւնը ոչ միայն խնդիր չէ, այլ գործնականում դառնում է բարդ ռեզիտնում Հայաստանի

Փոխել, Թե՞ Անցնել

Գործի Եւ

ՏՆՈՒՄ ԲԱՐԱՆԵԱՆ

այդ գործին ուղեկցող դիւանագիտական ճկունութեան օգտակար միջոց: Ըստ այդմ, շատ կարեւոր է, որպէսզի հանրային դիակուրսն էլ կենտրոնանայ ոչ թէ դրա վրայ՝ ինչ խաղաղութեան օրակարգ, եթէ թշնամին չունի դրա մտադրութիւնն անգամ, այլ կոնկրէտ աշխատանքի, որ բխում է Հայաստանի դիւանագիտական ճկունութեան, տնտեսական կենսունակութեան եւ պաշտպանական դիմադրունակութեան հրամայականներից: Կոնկրէտ, դեկլարատիւից վեր, առաւել մասնագիտական քննարկումներ այդ երեք ուղղութիւններով աշխատանքային արդիւնաւէտութիւնը բարձրացնելու շուրջ: Դրանով ձեւաւորուելու է այն պաշարը, հիմքը, որով Հայաստանն արդէն ստանալու է խաղաղութեան իր օրակարգը ռեզիտնալ զարգացումների օրակարգ բերելու եւ դրա շնորհիւ իրավիճակի մէջ իր լուծման դնելու գործնական հնարաւորութիւն:

« ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ »

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՁՊԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Վետիի Մեջ 56.2 Տոկոսով Յաղթած Է «Քաղաքացիական Պայմանագիրը»

Արարատի մարզի Վետի խոչորացումը համայնքին մէջ տեղի ունեցած աւազանի ընտրութիւններուն նախնական արդիւնքներով՝ 56.2 տոկոսով յաղթած է իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը: Ընտրութիւններուն մասնակցող միւս քաղաքական ուժը՝ «Իմ Հզօր Համայնքը» ստացած է ձայներու 41.5 տոկոսը:

Վետիի մէջ ընտրութիւնները տեղի ունեցած են համայնական ընտրակարգով. ՔՊ-ի ցուցակը կը գլխավորէր Արարատի նախկին մարզպետ, Պետական Գոյքի Կառավարման Կոմիտէի նախկին ղեկավար Գարիկ Սարգսեանը, իսկ «Իմ Հզօր Համայնք»-ի առաջին թիւը Սիսականի համայնքապետ Սպարտակ Թարթիկեանն էր:

Գլխավոր Դատախազութիւնը կը հաղորդէ, որ Վետի խորոշացումը համայնքի աւազանի ընտրութիւններուն արձանագրուած է առերեւոյթ յանցաւոր խախտումներու 10 դէպք, 6-ով նիւթեր կը նախապատրաստուին: Ըստ Դատախազութեան՝ եղած են ընտրութեան գաղտնիութիւնը խախտելու պարագային, երբ քուէարկութեան արդիւնքները լուսանկարած են,

տեղամասին հարող տարածքին մէջ վիճաբանութեան ու բռնութիւն կիրառելու դէպք եղած է, ընտրատեղամասերուն մօտ կուտակումներ, կրկնաքուէարկութիւն եւ լրագրողի գործունէութիւնը խոչընդոտելու դէպք:

«Քաղաքացիական Պայմանագիրը» ընտրութիւններուն մէջ յաղթեց միայն երկրորդ փորձէն յետոյ: Դեկտեմբերին Վետիի մէջ տեղի ունեցած ընտրութիւններուն արդիւնքներով առաջատար էր «Իմ Հզօր Համայնք» կուսակցութիւնը՝ 42.8 տոկոս ձայներու քանակով: ՔՊ-ն երկրորդ տեղն էր՝ հաւաքելով 38 տոկոս: Կայացած ընտրութիւններուն արդիւնքներով՝ որեւէ ուժ չէր յաջողած միայնակ մեծամասնութիւն ձեւաւորել, դաշինքներու վերաբերեալ համաձայնութիւն եւս չէր ձեռք բերուած: Երկրորդ եւ երրորդ տեղը զբաղեցուցած «Քաղաքացիական Պայմանագիր» եւ «Հանրապետութիւն» կուսակցութիւններու համամասնական ցուցակներու աւազանի բոլոր թեկնածուները ինքնաբացարկի դիմումներ ներկայացուցին, հետեւաբար պէտք է նոր ընտրութիւններ տեղի ունենային:

Եկեղեցին Ընդունելի Չի Համարեր Քրիստոսի Արձանին Տեղադրումը

Եկեղեցին ընդունելի չի համարեր Յիսուս Քրիստոսի արձանին տեղադրումը՝ նկատի առնելով, որ «այն յարիւր չէ հայ եկեղեցու դարաւոր պատկերազարկան եւ պաշտամունքային աւանդոյթին»: Այս որոշումը ընդունած է Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ գումարուած ժողովին ժամանակ:

Այս ծրագրի նախաձեռնութիւնը կը պատկանի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանին: «Եկեղեցու համար ընդունելի կարող է համարուել Փրկիչ մեր Տիրոջ հարթաքանդակի կառուցումը՝ «ամենափրկիչ» խաչքարերի սկզբունքով:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի յորդորն է նախաձեռնութեան հեղինակներին եւ մասնակիցներին՝ զերծ մնալ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու աւանդոյթին հակասող նախագծերից եւ առաջնորդուել մեր ազգային-եկեղեցական մշակոյթին, եկեղեցաբանական եւ աստուածաբանական սկզբունքներին համահունչ մօտեցումներով», ըսուած է Եկեղեցու յայտարարութեան մէջ:

Փրկիչին արձանը 33 մեթր բարձրութիւն պիտի ունենայ,



Յիսուս Քրիստոսի արձանին նախագիծը

պատուանդանը շատ աւելի՝ 2-3 անգամ բարձր: Հայաստանի ամենաբարձրադիր գօտիէն՝ Քրիստոսի արձանը դուրս պիտի բերէ հայ ժողովուրդը յուսահատութեան թմբիտէն, խոստացած է Ծառուկեանը:

Յիսուս Քրիստոսի արձանի կանգնեցման գաղափարին անդրադարձած էր նաեւ առաջին նախագահը: Ըստ Լեւոն Տէր Պետրոսեանի՝ Հայոց եկեղեցու Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը պէտք է կտրականապէս մերժէր այդ գաղափարը, որովհետեւ այն կը հակասէ Հայոց եկեղեցու 1700-ամեայ պատմութեան սրբագործուած աւանդոյթին:

Արցախի Մէջ Հաստատուած Են Ազատութիւններու Ժամանակաւոր Սահմանափակումներ

Արցախի նախագահ Արախիկ Յարութիւնեան ստորագրած է հրամանագիր ռազմական դրութեան պայմաններուն մէջ իրաւունքներու եւ ազատութիւններու ժամանակաւոր սահմանափակումներու մասին, կը յատնէ Արցախի տեղեկատուական շտաբը:

Համաձայն հրամանագրի՝ Արցախի տարածքին յայտարարուած ռազմական դրութեան ժամկէտի ըն-

թացքին կը սահմանափակուին հաւաքներու ազատութեան իրաւունքը, կ'արգիլուին գործադուները, կը գործեն կազմակերպութիւններու գործունէութիւնը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումներ: Կը կասեցուի նաեւ Արցախի պաշտպանութեան ու անվտանգութեան դէմ ուղղուած քարոզչութիւն եւ այլ գործունէութիւն ծաւալած կազմակերպութիւններու գործունէութիւնը:

Վարչապետին Եւ Արտախորհրդարանական Ուժերու Հերթական Նիստը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան խորհրդակցական ժողով կ'ունենայ արտախորհրդարանական քաղաքական ուժերու հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան մասնակցած է արտախորհրդարանական քաղաքական ուժերու հետ համագործակցութեան խորհրդակցական ժողովի հերթական նիստին: Նիստին ներկայ գտնուած են «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը, «Արդար Հայաստան» կուսակցութեան ղեկավար Նորայր Նորիկեանը, Հայաստանի Եւրոպական Կուսակցութեան ղեկավար Տիգրան Խզմալեանը, Հայաստանի Քրիս-

տոնէա-Ժողովրդավարական Կուսակցութեան նախագահ Լեւոն Շիրինեանը, «Միասնական Հայրենիք» կուսակցութեան նախագահ Մհեր Տէրտէրեանը, Պահպանողական Կուսակցութեան ղեկավար Միքայէլ Հայրապետեանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցութեան ղեկավար Դաւիթ Սանասարեանը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի Վարչութեան ատենապետ Սեդրակ Աճեմեանը եւ Տիգրան Արզաբանեանը:

Դատախազութիւնը Պահանջած Է ՊԵԿ-ի Նախկին Աշխատակիցէն Բռնագանձել Ապօրինի Ծագման Գոյքը

Գլխավոր Դատախազութիւնը դատարանէն պահանջած է Պետական Եկամուտներու Կոմիտէի նախկին աշխատակից Վահրամ Գուրոյեանէն եւ անոր հետ փոխկապակցուած 3 անձերէ յօգուտ Հայաստանի բռնագանձել ենթադրեալ ապօրինի ծագման գոյքը:

Դատախազութիւնը կը մանրամասնէ, որ մասնաւորապէս պահանջած է բռնագանձել Երեւանի մէջ գտնուող 8 բնակարանները եւ Հիւսիսային պողոտային վրայ գտնուող 6 կայանատեղիները, 4 հասարակական նշանակութեան տարածքները, Կոտայքի մարզին մէջ գտնուող հանգստեան գօտին եւ 2 հողամասեր, ինչպէս նաեւ 2 փոխադրամիջոցները, իսկ անհնարինութեան պարագային՝ անոնց միջին շուկայական արժէքը, որ ընդհանուր կը կազմէ 1 միլիարդ 601 միլիոն 422 հազար 519 դրամ, ինչպէս նաեւ Աւստրիոյ տարածքին մէջ գտնուող 2 անշարժ գոյքերու ձեռքբերման համար վճարած դրամական միջոցները՝ ապօրինի դիտարկուած 170 միլիոն 826 հազար 728 դրամի չափով:

Դատարանը հայցադիմումը ընդունած է վարոյթ:

Այս ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման թիւով 5-րդ հայցադիմումն է, որ դատարանը ընդունած է վարոյթով իրաւապահները նաեւ ուսումնասիրած են աւելի քան մէկ տարի առաջ մահացած, փտածութեան յանցագործութիւններու համար մեղադրուող զօրավար Մանուէլ Գրիգորեանի, Հայաստանի նախկին ոստիկանապետ Վլատիմիր Գասպարեանի, փոխադրութեան նախկին նախարար Գագիկ Բեկլարեանի, բնապահպանութեան նախկին նախարար Արամ



Յարութիւնեանի, Ազգային Անվտանգութեան Ծառայութեան գնդապետ Սերոբ Յարութիւնեանի, երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եղբոր՝ հետախուզման մէջ գտնուող Լեւոն Սարգսեանի դատեր, Ազգային ժողովի նախկին նախագահ Գալուստ Սահակեանի որդիին՝ Պետական Գոյքի Կառավարման Վարչութեան նախկին պետ Արման Սահակեանին, «Վսթրեչի Աբեր» մականունով յայտնի Արամ Վարդանեանին պատկանող գոյքն ու դրամական միջոցները: Արամ Յարութիւնեանի, Վլատիմիր Գասպարեանի, Սերոբ Յարութիւնեանի եւ Արամ Վարդանեանի գործերը արդէն դատարանն են: Ընդհանուր առմամբ, կ'ուսումնասիրուի աւելի քան 200 գործ:

Դատախազութիւնը աւելի առաջ յայտնած էր, որ ապօրինի գոյքի բռնագանձման աւարտած ուսումնասիրութիւններով 2021-ին բացայայտուած է ապօրինի ծագման 94 անշարժ, 23 շարժական գոյք եւ 27,7 միլիարդ դրամի չափով գումար

Արցախի մէջ ռազմական դրութիւն յայտարարուած էր 2020-ի

թուականի Սեպտեմբեր 27-ին, երբ սկսաւ պատերազմը:

ԼՈՒՐԵՐ

Մոսկուան Ծայրաստիճան Մտահոգուած Է Ղարաբաղի Մէջ Լարուածութեան Աճով

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ծայրաստիճան մտահոգութիւն կը յայտնէ Լեռնային Ղարաբաղի մէջ լարուածութեան աճի կապակցութեամբ: Այդ մասին ըստած է այսօր տարածած յայտարարութեան մէջ:

«Ռուսաստանեան խաղաղապահ զօրախումբի գծով երկու կողմերուն հետ փոխգործողութեամբ անհրաժեշտ միջոցառումներ կ'իրականացուին տարածաշրջանին մէջ իրադրութեան սրացման նուազեցման համար», - ԹԱՍՍ լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ յայտարարած է Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին Գործոց նախարարութիւնը:

Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կողմերուն կոչ կ'ընէ զսպուածութիւն ցուցաբերել եւ ապահովել Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդներու եռակողմ համաձայնութիւններու պահպանումը:

Նոյն օրը հրապարակած հաղորդագրութեամբ Ռուսաստանի պաշտպանութեան նախարարութիւնը շեշտած է, որ Ատրպէյճանի զինուած ուժերը, խախտելով եռակողմ յայտարարութեան դրոյթները, մտած են ռուսական խաղաղապահ առաքելութեան պատասխանատուութեան գօտի եւ դիտակէտ տեղակայած են:

Ատրպէյճանական կողմին կոչ եղած է ետ քաշել զօրքերը», - ըստած է Ռուսաստանի ռազմական գերատեսչութեան հաղորդագրութեան մէջ:

«Մտահոգութեամբ կը յայտարարէ Ղարաբաղի մէջ լարուածութեան աճը, որ կը խախտէ յայտարարութեան դրոյթները: Պաքուն կը պնդէ, թէ Ռուսաստանի Դաշնութեան ՊՆ յայտարարութիւնը կը հակասէ երկկողմ յարաբերութիւններու էութեան եւ այս տարուայ Փետրուարի 22-ին Ռուսաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ստորագրուած Դաշնակցային փոխգործակցութեան մասին հռչակագրի դրոյթներուն:

Ատրպէյճանի ռազմական գերատեսչութիւնը կը յայտարարէ, որ իր երկրի տարածքին չկայ Լեռնային Ղարաբաղ անուամբ վարչատարածքային միաւոր, եւ Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութեան կոչ կ'ընէ «ապահովել Ատրպէյճանի տարածքին հայկական բանակի եւ հայկական անօրինական զինուած խմբաւորումներու մնացորդներու լիակատար դուրսբերումը»:

«Մտահոգութեամբ կը յայտարարէ Ղարաբաղի մէջ լարուածութեան աճը, որ կը խախտէ յայտարարութեան դրոյթները: Պաքուն կը պնդէ, թէ Ռուսաստանի Դաշնութեան ՊՆ յայտարարութիւնը կը հակասէ երկկողմ յարաբերութիւններու էութեան եւ այս տարուայ Փետրուարի 22-ին Ռուսաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ստորագրուած Դաշնակցային փոխգործակցութեան մասին հռչակագրի դրոյթներուն:

Ատրպէյճանի ռազմական գերատեսչութիւնը կը յայտարարէ, որ իր երկրի տարածքին չկայ Լեռնային Ղարաբաղ անուամբ վարչատարածքային միաւոր, եւ Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութեան կոչ կ'ընէ «ապահովել Ատրպէյճանի տարածքին հայկական բանակի եւ հայկական անօրինական զինուած խմբաւորումներու մնացորդներու լիակատար դուրսբերումը»:

Պաքուն կը Հակադարձէ Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութեան

Պաքուն հակադարձած է Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութեան յայտարարութեան՝ «ափսոսանք յայտնելով, թէ այն «միակողմանի է եւ «իրականութեան չի համապատասխաներ»:

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը կը յայտնէ, որ Պաշտպանութեան Նախարարութեան ղեկավար Զաքիր Հասանովը նախօրէին Ռուսաստանի պաշտպանութեան նախարար Սերգեյ Շոյգուի հետ հեռախօսակցութիւն ընթացքին յայտնած էր թէ, կը ճշդուին դիրքերը եւ տեղակայման վայրերը:

Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը կը պնդէ, թէ Պաքուն հաւատարիմ կը մնայ 2020 թուականի Նոյեմբեր 10-ի յայտարարութեան, որուն 4-րդ կէտին համապատասխան «զեռ չէ իրականացուած Ատրպէյճանի տարածքին հայկական բանակի եւ հայկական անօրինական զինուած կազմաւորումներու մնացորդներու

Փառուխը Ռուս Խաղաղապահներու Վերահսկողութեան Տակ Է, Հայկական Ուժերը Պահպանած Են Քարագլուխի Հիմնական Մասին Տիրապետումը



Ռուսական խաղաղապահ զօրքերը Արցախի Փառուխ բնակավայրին մօտ

Մարտ 27-ի երեկոյեան եւ 28-ին՝ ժամը 12:00-ի դրութեամբ, մարտավարական իրադրութիւնը շփման գիծի մերձող երկայնքով, այդ շարքին՝ նաեւ շփման գիծի արեւելեան հատուածին մէջ, յարաբերական կայուն է, զինադադար

ի հական խախտումներ չեն արձանագրուած, կը յայտնէ Արցախի Տեղեկատուական Շտաբը:

Ըստ հաղորդագրութեան, Ասկերանի շրջանի Փառուխ գիւղը այժմ կը գտնուի Արցախի մէջ տեղակայուած ռուս խաղաղապահ

Ատրպէյճանի Նպատակն Է՝ Անհնար Դարձնել Արցախցիներուն Կեանքը Սեփական Հայրենիքին Մէջ. Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Կառավարութեան նիստին ընթացքին

Կառավարութեան նիստին սկիզբը վարչապետ Նիկոլ Փաշինեան գնահատականներ հնչեցուց Արցախի մէջ երկու շաբաթէն աւելի երկարող կազմի խնդիրին մասին. «Ատրպէյճանի գործողութիւնները արդիւնքում Արցախը յայտնուել է մարդասիրական աղէտի շեմին»:

Հայաստանի վարչապետը շեշտեց, որ այս քայլով Ատրպէյճանը կ'ապացուցէ, որ ինք հեղինակած է Մարտ 7-ի պայթումը: Կազմատակարարման դադրեցումը տեղի ունեցած է եղանակային բացառիկ խիստ պայմաններու մէջ: Այս ամէնը, ըստ Փաշինեանի, միջազգային հանրութեան համար Արցախի հիմնախնդիրը դիպուկ նկարագրութիւն է. «Սա անառարկելիօրէն իր ցոյց է դնում Ատրպէյճանի քաղաքականութիւնը արցախահայրութեան նկատմամբ, այն է՝ անհնար դարձնել նրանց ապրելը սեփական հայրենիքում»:

Փաշինեան անդրադարձաւ նաեւ այս պայմաններուն մէջ խաղաղ դարաշրջան բանալու իշխանութիւններու ռազմավարութեան եւ անոր շուրջ հնչող քննադատութեան: Պնդեց, որ այդ քաղաքականութիւնը այլընտրանք չունի. «Իր այս գործողութիւններով, գանազան սադրանքներով Ատրպէյճանը փորձում է մեզ շեղել խաղաղութեան օրակարգից, անօրինականացնել այդ օրակարգը»:

Վարչապետը նաեւ ուղիղ կապ կը տեսնէ Ատրպէյճանի ուղարկած հինգ առաջարկներուն եւ Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին մէջ. «Ուշադրութիւն դարձրէք, Հայաստանը յայտարարում է, որ Ատրպէյճանի ներկայացրած առաջարկները Հայաստանի համար ընդունելի են, իսկ

Ատրպէյճանը փակում է կազատարը, եւ սա ամենամեծ ապացոյցն է այն բանի, որ Ատրպէյճանի քաղաքականութիւնը մեզ խաղաղութեան օրակարգից շեղելն է»:

Վարչապետը վերահաստատեց, որ այս առաջարկներուն մէջ Հայաստանի համար անընդունելի ոչինչ կայ: Այլ բան, որ անոնք ամբողջութեամբ չեն արտացոլել առկայ խնդիրներուն ամբողջ օրակարգը: ԵԱՀԿ Մինսքի խմբակին փոխանցուած Հայաստանի պատասխանը ամբողջացուցած է զանոնք: Երեւանը պատրաստ է խաղաղութեան պայմանագրի բանակցութիւններուն, վերստին յայտարարեց Փաշինեան:

Ան անդրադարձաւ նաեւ իշխանութեան պատասխանին վերաբերեալ ընդդիմութեան հնչեցուցած քննադատութեան, մէջբերումներ կատարեց նախկին նախագահներ Ռոպերթ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի յայտարարութիւններէն. «Ռոպերթ Քոչարեանը Երեւանի «Զուարթնոց» օդանաւակայանում լրագրողի հարցին ի պատասխան բառացիօրէն յայտարարել է. «Եթէ մենք ընդհանուր խօսում ենք տարածքային ամբողջականութեան մասին, ապա մենք չպէտք է ստեղծենք, որ դրա դէմ ենք: Մենք էլ տարածք ունենք, եւ մենք եւս համարում ենք, որ այդ տարածքը կարիք ունի նման սկզբունք յարգելու համար»: Նրանից յետոյ Սերժ Սարգսեանը նոյնպէս երկար տարիներ բանակցել է Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման մասին՝ որպէս կարգաւորման հիմնարար սկզբունք ընդունելով այդ թւում տարածքային ամբողջականութեան սկզբունքը: Այնպէս որ, այստեղ որեւէ շահարկում տեղին չէ»:

զօրակազմի վերահսկողութեան գօտիին մէջ:

«Շնորհիւ Արցախի զինուած ուժերի խիզախ ջանքերի՝ հայկական կողմին յաջողուել է կասեցնել ատրպէյճանական զինուած ուժերի ստորաբաժանումների յառաջխաղացումը եւ պահպանել Քարագլուխ լեռան հիմնական մասի հանդէպ տիրապետումը», կը յայտնէ Արցախի Տեղեկատուական Շտաբը՝ նշելով, որ ատրպէյճանական զօրքերը կը շարունակեն մնալ Քարագլուխի մէկ հատուածին մէջ ամրացուած դիրքերուն մէջ:

Աշխատանքները ռուս խաղաղապահ զօրակազմի հրամատարութեան հետ ատրպէյճանական կողմի՝ ելման դիրքեր վերադառնալու

շուրջ կը շարունակուին, ըստած է հաղորդագրութեան մէջ:

Բանակցութիւններու արդիւնքներով, ատրպէյճանական կողմը իրականացուցած է իր ստորաբաժանումներուն դուրսբերումը Փառուխ բնակավայրի տարածքէն, ըստած է Լեռնային Ղարաբաղի մէջ ռուս խաղաղապահներու առաքելութեան վերաբերեալ Ռուսաստանի Պաշտպանութեան Նախարարութեան հաղորդման մէջ:

Կը նշուի նաեւ, որ Ասկերանի շրջանին մէջ Ատրպէյճանի զինուած ուժերուն կողմէ զինադադարի խախտման երկու դէպք արձանագրուած է. փոխհրաձգութեան հետեւանքով իւրաքանչիւր կողմէ վիրաւորուած է երկու հոգի:

ՊՆ-ն Կը Յերքէ, Թէ Ռուսաստանին Փոխանցած Է «Սու-30» Օդանաւեր Ուքրանիոյ Մէջ Օգտագործուելու Յամար



Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան պատկանող «Սու-30» ռազմական օդանաւեր

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը կը հերքէ լուրերը, թէ Ռուսաստանին փոխանցած է չորս «Սու-30» օդանաւ՝ Ուքրանիոյ դէմ մարտական գործողութիւններու ընթացքին կիրառելու նպատակով:

«Նշուած տեղեկութիւնները բացարձակ սուտ են. Հայաստանի Հանրապետութեան Զինուած Ուժերու սպառազինութեան մէջ գտնուող բոլոր օդանաւները, անձնակազմով հանդերձ, իրենց տեղն են եւ կը կատարեն առաջադրուած խնդիրները», կը յայտարարէ ՊՆ-ն:

Այս մասին լուրը հրատարակուած էր:

Կած էր Թուրքիոյ մէջ հեռարձակուող ատրպէյճանական «Haber Global» հեռուստաընկերութիւնը՝ յղում կատարելով Թուրքիոյ հետախուզութեան անյայտ աղբիւրներու:

Ըստ Հայաստանի ռազմական գերատեսչութեան՝ իրականութեան չի համապատասխաներ նաեւ այս հրատարակման մէջ կատարուող մէկ այլ պնդում, ըստ որուն՝ Հայաստանը կը հանդիսանայ հիմնական ուղղութիւններէն մէկը, որով Սուրիայէն վարձկաններ կը տեղափոխուին Ուքրանիա՝ Ռուսաստանի կողմէ կոռելու համար:

Տինքի Սպանութեան Յետ Առնչութիւն Ունեցողը Արտայանձնուած Է Թուրքիա

Պոլսահայ լրագրող, մտաւորական, «Ակօս» շաբաթաթերթի հիմնադիր խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան աջակցելու համար 2007 թուականին կալանաւորուած, 2013-ին 12 տարի եւ 6 ամիս բանտարկութեան դատապարտուած եւ փախուստի մէջ գտնուող Ահմետ Իսքենտերը արտայանձնուած է Թուրքիա:

«Ակօս»-ի հաղորդմամբ, Թրքական Ազգային Անվտանգութեան

Թեան եւ Միջազգային Հետախուզական Ծառայութիւններու համատեղ ուժերով Իսքենտերը մէկ ամիս առաջ յայտնաբերուած էր Ղրղաստանի մայրաքաղաք Պիշքեքի մէջ ու ձերբակալուած էր զրոյցական իրաւապահներու կողմէ: Անոր մօտ յայտնաբերուած է եղբոր անունով անձնագիրը՝ փոխուած լուսանկարով: Կիրակի օր Ահմետ Իսքենտերը բերուած է Թուրքիա եւ ուղարկուած է կալանավայր:

Ինչպէս Վատնուած Են

Շարունակուած էջ 1-էն

որոնք իրաւունք չունէին ստանալու այդ գումարները: Յօդուածին կցուած են բազմաթիւ կեղծ փաստաթուղթեր, որոնք կազմուած են փաստաբաններուն կողմէ՝ ծածկելու համար իրենց հակաօրինական արարքները:

Ֆրանսահայերէ կազմուած յանձնախումբը, որ լիազօրուած էր վերահսկելու գումարներու բաշխումին, չէ կարողացած կատարել իր պարտականութիւնը՝ փաստաբաններուն կողմէ, այլեւայլ պատրուակներով մերժումի արժանանալու հետեւանքով: Միացեալ Նահանգներու շրջանային դատաւոր Քրիսթինա Սնայտըր, որուն ուսերուն կ'իյնար գումարներու ճշգրիտ բաշխումին հսկելուն պարտականութիւնը, ան են թերացած է՝ մերժելով Ֆրանսահայերու յանձնախումբի բազմաթիւ դիմումները: Քալիֆորնիոյ Փաստաբաններու Պալատին եւ FBI-ին ներկայացուած բողոքները եւս արդիւնք չեն տուած ու

այսպիսով մինչեւ օրս ոչ մէկը պատասխանատուութեան կանչուած է եւ հաւանաբար ալ, այսուհետեւ եւս մեղաւորները մնան անպատիժ, նկատի ունենալով որ, արդէն իսկ անցած է վաղեմութեան ժամկետը՝ որ ընդհանրապէս տասը տարի է:

«Լոս Անճելըս Թայմզի» հրատարակուած ոչ միայն անարդարութիւն է գոհերու ժառանգորդներուն, այլ եւ վիրաւորանք՝ Ցեղասպանութեան գոհերու յիշատակին: Հայութեան իրաւունքներուն տէր կանգնելու համար սկսած գործը, ժամանակի ընթացքին դժբախտաբար շեղած է իր նպատակէն եւ անհատներ իրենց արարքներով այսօր կը վարկաբեկեն ոչ միայն իրենց անունը, այլ հայութեան արժանապատուութիւնը:

«Լոս Անճելըս Թայմզի» ուսումնասիրութիւնը զգաստութեան հրաւեր է նաեւ մեր ազգային կեանքի բոլոր դերակատարներուն՝ խղճամտօրէն կատարելու իրենց վստահուած պարտա-

Փառուխն Ու Քարագլուխ Բարձունքը՝ Ռուս-Ատրպէյճանական Յարաբերութիւններու Սրման Պատճառ

Լեռնային Ղարաբաղի Փառուխ գիւղն ու Քարագլուխ բարձունքը դարձած են ռուս-ատրպէյճանական յարաբերութիւններու սրման պատճառ: Անցեալ օրերուն միմեանց ուղղուած հրապարակային պահանջներէն, պարտաւորութիւնները յարգելու կոչերէն ու անուղղակի մեղադրանքներէն յետոյ, Պետտումայի պատգամաւոր Միխայիլ Տելեակին նախօրէին ռուսական Առաջին ալիքի եթերով յայտնած էր, որ Ատրպէյճանէն վտանգ կայ եւ հարկաւոր է հարուածել ատրպէյճանական նաւթային ենթակառուցուածքները:

«Մեր ինչի՞ն է պէտք Ատրպէյճանի նաւթարդիւնաբերութիւնը: Մենք անոր կարիքը չունինք, այն չափազանց խոցելի է: Եթէ մարդիկ խօսքեր չեն հասկնար, հաւանաբար ստիպուած ըլլան գործերը հասկնալ: Միակ հարցն այն է՝ ինչպէս այդ ընել», նշած է ան:

Քրեմլինը այսօր արձագանգած է պատգամաւորին գայթակղային այս յայտարարութեան՝ ընդգծելով, որ Տելեակինի յայտարարութիւնները Ռուսաստանի պաշտօնական տեսակէտին հետ որեւէ կապ չունին: Աւելին, Տմիթրի Փեքով ընդգծած է, որ Ատրպէյճան-

նը Ռուսաստանի գործընկեր պետութիւնն է, որու հանդէպ պէտք է զսպուածութիւն ցուցաբերել:

«Այս յայտարարութիւնը որեւէ կերպ չի համապատասխաներ եւ չի կրնար համապատասխանել Ռուսաստանի Դաշնութեան պաշտօնական դիրքին: Ի հարկէ, մենք կոչ կ'ընենք վերահսկելու զգացմունքները եւ գերծ մնալու նման յայտարարութիւններէ, յատկապէս, երբ խօսքը կը վերաբերի մեր գործընկերներուն, իսկ Ատրպէյճանը կը պատկանի գործընկեր պետութիւններու շարքին», նշած է Քրեմլինի խօսնակը:

Փեքով յաւելած է, որ անհրաժեշտ է զսպուածութիւն ցուցաբերել յատկապէս այն պայմաններուն մէջ, երբ Ռուսաստանը եռանդուն ջանքեր կը գործադրէ Ղարաբաղի մէջ խաղաղութիւն պահպանելու համար: Ղարաբաղի մէջ սրած լարուածութեան լոյսին տակ Պաքուն առիթը բաց չի թողեր ընդգծելու, որ ռուս խաղաղապահները ժամանակաւորապէս տեղակայուած են Ղարաբաղի մէջ:

Ըստ Նոյեմբեր 9-ի յայտարարութեան, անոնց առաքելութիւնը կրնայ աւարտիլ, եթէ 2026-ին կողմերէն ոեւէ մէկը նման պահանջ դնէ:

Ատրպէյճանը Հող Կը Պատրաստէ

Շարունակուած էջ 1-էն

քուն կը յայտարարէ, որ մտադիր է Երեւանի հետ խաղաղութեան համաձայնագիր կնքելու, եթէ Հայաստանը պատրաստ է լուրջ քայլերու: Թէ ինչ քայլերու մասին է խօսքը՝ պաշտօնական յայտարարութիւնը չի յստակացներ:

«Եթէ հայկական կողմը խաղաղութեան համաձայնագիրը կը դիտարկէ ոչ թէ որպէս հասարակութիւնը տեղեակ պահելու հերթական արարք, այլ՝ լուրջ քայլ, ապա ժամանակն է յստակ քայլերու ձեռնարկելու: Կ'ուզենք կրկին ընդգծել, որ Ատրպէյճանը պատրաստ է անոր», յայտարարած է Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը:

Պաքուն կրկին յիշեցուցած է կարգաւորման այն հինգ սկզբունքները, որոնք ներկայացուցած էր Հայաստանին, ընդգծելով որ խաղաղութեան համաձայնագիրը պէտք է հիմնուած ըլլայ անոնց վրայ:

Մեկնաբանելով Հայաստանի Ավտանգութեան Խորհուրդին յայ-

տարարութիւնը, որ անհրաժեշտ են միջազգային զսպման մեխանիզմներ՝ հետագայ լարուածութիւնը կանխելու համար, Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը պնդած է, որ զսպման լաւագոյն ձեւը միջազգային իրաւունքն է, այդ շարքին՝ «այլ պետութիւններու ներքին գործերուն չմիջամտելը եւ յարգանքը պետութիւններու ինքնիշխանութեան ու միջազգայնօրէն ճանչցուած սահմաններուն նկատմամբ»: Հայաստանը, ըստ յայտարարութեան, չի պահպաներ միջազգային իրաւունքը եւ «չի կրնար խօսիլ միջազգային զսպման մեխանիզմի մասին»:

Պնդելով, որ պաշտօնական Երեւանը կը խախտէ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու եռակողմ յայտարարութեան դրոյթները, Պաքուն կը յայտարարէ, որ այդ է որ «կը մեծցնէ տարածաշրջանին մէջ լարուածութեան աստիճանը եւ կը վտանգէ խաղաղարար ջանքերը»:

կանութիւնը, յատկապէս արդի ժամանակաշրջանին երբ ոչինչ կարելի է գաղտնի պահել եւ ամէն ինչ ի յայտ կու գայ՝ ուշ թէ կանուխ:

3.9. Յօդուածին մէջ յիշուած

Ուաշինկթըն Սադրիչ Կը Որակէ

Շարունակուած էջ 1-էն

ըաւուածութիւնը՝ գտնելու բոլոր մնացեալ խնդիրներու համապարփակ լուծումները: «Հայաստանին

բոլոր անունները հերքած են իրենց հասցէին եղած մեղադրանքները ու մենք ստիպուած ենք յարգելու իւրաքանչիւրի անմեղութեան կանխավարկածը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

ՀԿԲՄ-ի Կրթանպաստներու Ծրագիրը Բաց է 2022-2023 Թուականի Դիմումներուն Համար

Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) կրթանպաստներու Յանձնախումբը հաճոյքով կը յայտարարէ բացումը՝ 2022--2023 տարեշրջանի կրթանպաստներու ծրագիրին՝ Ապրիլ 1-էն սկսեալ:



Անհատական կրթանպաստներ, իւրաքանչիւրը մինչեւ 1500 տոլար, պիտի տրուին արժանի ուսանողներու, որոնք կը յաճախեն Ամերիկեան քառամեայ համալսարաններ: Դիմողները պէտք է ըլլան հայկական ծագումով, ունենան նուազագոյնը 3.5 GPA եւ գործունեայ ըլլան հայկական համայնքէն ներս:

Հետաքրքրուողները կրնան այցելել <https://aebu.org/our-programs/scholarship/> կայքը՝ յաւելեալ տեղեկութիւններ եւ դիմումագրեր ստանալու համար:

Դիմումները պէտք է ներկայացուին առցայտ կամ ցամաքային միջոցաւ մինչեւ Յունիս 30, 2022: Նամակով դիմումները պէտք է ուղարկուին՝ AEBU Scholarship Committee, 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104: Նաեւ կարելի է հեռաձայնել 626-344-7321 թիւին՝ յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար:

ՀԿԲՄ իր տարեկան նպաստները կը յատկացնէ մրցակցական հիմունքներով եւ վերանայումէ ետք: Կրթանպաստի արժանացած ուսանողներու անունները պիտի յայտարարուին առցայտ՝ մինչեւ Օգոստոս 1, 2022-ին: Կրթանպաստներու յանձնման պաշտօնական արարողութիւնը տեղի պիտի ունենայ Օգոստոս ամսուայ ընթացքին՝ ծնողներու եւ Միութեան բարեկամներու ներկայութեամբ:

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը հիմնուած է 1969-ին խումբ մը նուիրեալներու կողմէ, որոնք հաւատացած են կարիքաւոր ուսանողներուն օգտակար դառնալու առաքելութեամբ: Մենք կը հաւատանք, որ ուսանողական նպաստները կարելորդ ներդրումներ են մեր երիտասարդներու կրթութեան՝ կերտելու համար աւելի փայլուն ապագայ մը:

Մեր ծրագիրներուն օժանդակելու համար կը խնդրենք այցելել <https://aebu.org/donate/> կայքէջը:

Լոս Անճելոսում ՀՀ Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական Վարազդատ Պահլաւունին Մասնակցեց Եւրոպայի 4-րդ Դիւանագիտական Կոնֆերանսին



Մարտի 21-ից 22-ը Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական Վարազդատ Պահլաւունին մասնակցեց Եւրոպայի 4-րդ դիւանագիտական կոնֆերանսին, որը նուիրուած էր միջազգային առևտրային յարաբերութիւններին: Կոնֆերանսին մասնակցում էին Լոս Անճելոսում, Սան Ֆրանսիսկոյում, Տեններում գտնուող 26 օտարերկրեայ պետութիւնների գլխաւոր հիւպատոսութիւնների 36 ներկայացուցիչներ:

Կոնֆերանսի բացմանը ելոյթով հանդէս եկան Եւրոպայի նահանգապետ Սփենսեր Քոքսը, Եւրոպայի Հովտի Համալսարանի նախագահ Ուէյն Վոթը, ՄԱԿ-ի կլոպըլ հարորդակցութիւնների դեպարտամենտի ներկայացուցիչ Ֆելիպէ Կուէյպոն եւ այլ պաշտօնատար անձինք: Կոնֆերանսի շրջանակներում տեղի ունեցան պանելային քննարկումներ, որտեղ Հայաստանը ներկայացուած էր Կոստա Ռիկայի, Յունաստանի, Չեխիայի, Ինտոնեզիայի եւ Մոնղոլիայի հետ

մեկտեղ: Խորհրդական Վարազդատ Պահլաւունին պանելային ձեւաչափով հանդիպման ժամանակ ելոյթ ունեցաւ "ԿՈՎԻԴ-19 համավարակի հետեւանքների մեղմացմանն ուղղուած ՀՀ կառավարութեան ձեռնարկած տնտեսական եւ սոցիալական աջակցութեան միջոցները" թեմայով:

Այնուհետեւ Վ. Պահլաւունին պատասխանեց ներկաների հարցերին: Վ. Պահլաւունին նաեւ ներկայացրեց Արցախեան 44-օրեայ պատերազմը եւ դրա հետեւանքով ստեղծուած մարդասիրական ճգնաժամը Արցախում, անդրադարձ կատարեց պատերազմի ընթացքում Ատրպէյճանի կողմից միջազգային մարդասիրական իրաւունքի նորմերի խախտումներին, ներկայումս ապօրինաբար բանտարկուած հայ ռազմագերիների ու քաղաքացիական անձանց հարցին, Արցախում Ատրպէյճանի կողմից քաղաքացիական բնակչութեան դէմ ուղղուած հակաբնակչութեանը եւ ստեղծած մարդասիրական ճգնաժամին:

Հայ-Ամերիկեան Թանգարանի

Շարունակուած էջ 1-էն

սին:

Կլենտէյլի քաղաքապետուհի Փոլա Տիվայն ջերմօրէն ողջունեց թանգարանի շինութեան նախաձեռնողները եւ յաջողութիւն մաղթեց անոնց օգտաշատ աշխատանքներուն:

ԱՄՆ-ի Գոմկրեսի անդամ Ատամ Շիֆ իր ելոյթին էջ բարձր գնահատեց հայ ժողովուրդին ունեցած դրական ներդրումը հայրենակերտումի գործընթացին մէջ:

Գալիֆորնիոյ Խորհրդարանի անդամ Անթոնիո Փորթիանթինոն հպարտաւոր իր երեւոյթ մը գոչեց թանգարանի շինութիւնը եւ յայտնեց որ մեծ ուրախութեամբ պիտի փափաքէր ներկայ գտնուիլ անոր բացումին:

Այս առթիւ հակիրճ ելոյթներով հանդէս եկան նաեւ հոգաբարձական խորհուրդի անդամներ իրաւաբան Թալին Եագուպեան, Աւետիք Իգմիրլեան, Տօքթ. Ռաֆֆի Պալեան, Գաբրիէլ Մորլոյեան, Զաւէն Գազազեան, Տօքթ. Նազարէթ Տարազճեան եւ տարբեր յանձնախումբերու ներկայացուցիչներ:

Թէեւ տեղույն վրայ դրամական նուէրներ չյայտարարուեցան, սակայն կ'իմանանք որ ցարդ հաւաքուած է աւելի քան 28 միլիոն տոլար: Այսուհանդերձ ծանուցուեցաւ հետեւեալ բաժանմունքներու

նուիրատուներու անունները.

Ճէք եւ Մարտ Գալաճեան՝ հանդիսասրահ

Գեւորեան ընտանիք -Նուէրներու խանութ

Առաքելեան ընտանիք -Գլխաւոր Մուտքը

Մկրուպեան ընտանիք՝ Արխիւներու բաժանմունք

GASKA Alliance Fund Հայկական Այբուբեն (քանդակ պատի վրայ):

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին տաղանդաւոր նկարիչներ Ռիւպի Վարդանի, Վերա Արիւթիւնեանի եւ Աննա Կոստանեանի ստեղծագործութիւնները, որոնց մասին համադրութիւնը կատարեց Արա Օշական:

Գործադրուեցաւ նաեւ օրուան պատշաճ գեղարուեստական յայտագիր մը՝ մասնակցութեամբ Allen G նուազախումբին եւ երիտասարդ ու խոստմնալից շնորհալի մենակատարներուն:

Կը շնորհաւորենք սոցն յիշատակելի յաջող ձեռնարկի կազմակերպիչները մասնաւորաբար՝ յանձնախումբի համանախագահներ՝ Ալեքսիա Գեւորեանն ու Ալին Պարան Օրունճագճիէլը:

Ներկաները սրահէն բաժնուեցան համահայկական միասնականութեան եւ համերաշխութեան արգասիքն եղող բարձրորակ ձեռնարկի մը լաւագոյն տպաւորութիւններով:

AEBU SCHOLARSHIP PROGRAM

Հեղինակ Քեօշկերեան նաեւ առի երախտագիտութիւն՝ չէ մոռցած իր յատուկ շնորհակալութիւնները հրատարակել բոլոր անոնց, որոնք ներդրում ունեցած են գրքովի լոյս ընծայման: Այսպէս, Վաչէ Մէմէրճեանին՝ հատորը խմբագրելուն, Հէրի Մեսրոպեանին՝ գրքովի ձեւաւորման, արուեստագէտ Սիրուն Երէցեանին՝ տեղադրուած մանրանկարներուն, Լոս Անճելըսի Թ.Մ.Ին՝ Սարուխանի գծագրութիւնները արտօնելուն, Կարինէ Տէր Գեորգեանին ու Նուրիցա եւ Անժել Քիւրքչեաններուն՝ ասացուածքներու յատուկ ձեւագիր հաւաքածոներու գրքովը տրամադրելուն, Նորայր Տատուրեանին՝ գրքովի վերատեսութեան եւ Մէրթ Նաւեանին հեղինակի նորատիպ նկարին համար:

Եւ անկեղծօրէն արտայայտուելով, ըսեմ, որ ինձի համար գրքովը սահուն եւ հասկնալի իր սահուն ոճով, նաեւ ունի որոշ խորհուրդ մը: Ան դասատու ալ է, եւ մարդս կը մղէ մտածելու ու նոյնիսկ խորհրդածելու, որովհետեւ անոնք շաղախուած են բաղձանքի եւ մաղթանքի երանգներով, որոնք ընթերցողին մօտ որոշ համակրանք մըն ալ կը ստեղծեն: Գրքովը նաեւ շարժման մէջ կը դնէ գանազան գաղափարներ եւ մտածելու կը մղէ ընթերցողը: Թէեւ տարուած աշխատանքը թարգմանական է, բայց այդ մէկը եղած է բծախնդիր ու իր մէջ պահած հայկական աւանդութիւնը: Ահա թէ ինչո՞ւ «Հայկական Ասացուածքներ...» այս գրքովը կարելի է նկատուի օգտաշատ հրատարակութիւն մը, որուն համար իբրեւ

Շար.ը էջ 15

Գորգերի Լուսացրատան Անուշը («Երեւանեան Պատկերներ» Շարքից)

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

ԲԻՋՆԵՍ հասկացողութիւնը լաւագոյնս արմատաւորուած է այսօրուայ Հայաստանում: Էլ ինչ կարգի սպասարկութիւն ասես, որ չկայ: Դէ՛, տաքսիի սպասարկութիւնը հնուց է գալիս, նոր երեւոյթ չէ: Իսկ ասա՛ տան կահկարասու փոխադրութիւն, խոշոր հանրախանութիւն ուտելիքի կամ խմիչքի պատուէր տալ հեռաձայնով, որ տունդ կը բերեն միայն հինգ հարիւր դրամով, եւ այլն, եւ այլն:

Ընդունուած բիզնես է այս կամ այն ճաշարանից կամ ռեստորանից ուտելիք պատուիրելը, իսկ Պիցցայի՝ նման կարգի սպասարկում՝ ամէնաշահաւէտ բիզնեսներէն է, մանաւանդ երիտասարդների շրջանում:

Իւրաքանչիւր շէնքի նախամուտքի պատերին մշտապէս փակցուած են տասնակներով գովազդներ՝ այսինչ կամ այնինչ կարգի սպասարկման համար՝ գրաւիչ առաջարկներով: Դրանցից մէկն էլ՝ բնակարանի կամ որեւէ հիմնարկի գորգերի լուսացման առաջարկութիւնն է անյայտ մի ընկերութեան կողմից՝ շատ յարմար պայմաններով:

Եւ ամենագրաւիչն այդ թռուցիկներում այն է, որ ընկերութեան բանուորներն են գալիս քո բնակարանը, իրենք են հաւաքում գորգերը ու ուղեգորգերը, ուրում ու ունենրին դրած տանում են իրենց գործատեղին:

Դա դեռ ոչի՛նչ... մի քանի օր անց, քիմիական մաքրումից յետոյ բերում են ապրանքդ, ու տեղադրում այնտեղ՝ ուր որ հարմար են գտնում:

Այս ամէն տեղեկութիւնները հաւաքեցի Լուս Անշելիսից Երեւան ժամանած հենց առաջին օրը՝ իմ բնակարանի շքամուտքի պատերին փակցուած ազդագրերից եւ թռուցիկներից: Չորս ամիս անդադար տնից դուրս գալիս, կամ էլ վերադարձիս, անդադար աչքիս էին զարնում, շատ անգամ ոչ մաքուր հայերէնով գրուած ազդագրեր, սակայն ամենակարեւորը՝ հաստատութեան հասցէն եւ հեռախօսի թիւը՝ խոշոր չափի գրերով:

Այսօր Երեւանում հրաշալիօրէն ընդօրինակում են այն ամէն լաւն ու գնահատելին, որ կայ Եւրոպական երկրներում եւ, ի մասնաւորի Ամերիկայում: Եւ մարդիկ այնքան են մխրճուած օտար բարքերի մէջ, որ գնահատելի իմաստով, շատ անգամ իրենք իրենց գերազանցում են:

Ահա՛ մեր ասածի լաւագոյն օրինակներից մէկը:

Իմ ծննդեան 75ամեակին նուիրուած միջոցառման նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու համար, ես արդէն չորս ամիս Երեւանում էի: Իմ «Միփան» երգչախումբը Մարիետայի գլխաւորութեամբ, Երեւան էր ժամանելու՝ երեկոյից մէկ շաբաթ առաջ:

Մասետրօ, ձեր գորգերը վաղուց չեն մաքրուել, ասում է երկու շաբաթ մէկ իմ բնակարանը մաքրող, կարգի բերող, նախկինում քիմիայի մասնագէտ քառասնամեայ Նունէն, մէկ շաբաթից Մարիետայի գալու է: Լաւ կը լինի մարդկանչէք, որպէսզի մաքրեն, թարմացնեն, Մարիետայի համար էլ հաճելի անակնկալը լինի, թէեւ,

չեմ կարծում, որ կարողանաք այս մի քանի օրերի ընթացքում յաջողացնել, մանաւանդ, որ շաբաթավերջ է:

Լաւ ես ասում Նունէ, ճիշդ ես, Մարիետայի համար մեծ անակնկալ կը լինի, այսօր իսկ կը հետաքրքրուեմ:

Թէեւ իմ շէնքի մուտքի պատերին կայ մէկերկու թռուցիկ՝ գորգեր մաքրող ընկերութիւնների հեռախօսի համարներով, բայց չեմ ուզում հենց այնպէս, գործից անտեղեակ մարդ երեւալ հեռախօսի միւս ծայրին յայտնուող անծանօթ մարդկանց համար, որովհետեւ, ինչպէս ասում են՝ «տառապանքս փորձ ունի», տարիների ընթացքում ինձ շատ են խաբել Հայաստանի «արհեստագործները»: Որոշեցի դիմել բարեկամիս.

Իւա (Իսկական անունը Իրինա է) ջան, ուզում եմ մինչեւ Մարիետայի գալը մեր տան գորգերը մաքրել տալ, ի՞նչ խորհուրդ կը տաս:

Ախր Հենրիկ ջան, երկար ժամանակ է Երեւանում ես, ինչ է, նո՞ր միտքդ ընկաւ... շատ ես ուշացել է՛... դրանք շատ գործ են ունենում եւ լաւ, որակով գործ են անում ու հագիւ թէ մէկ շաբաթում կարողանան հասցնել քո պատուէրը կատարել: Անցեալ շաբաթ Նարինէի (իր աղջիկն է) տան գորգերը լուսացին, մաքրեցին: Հիմա կը տամ դրանց հեռախօսի համարը, փորձիր, գուցէ կարողանաս համոզել, որ քո պատուէրը երեքչորս օրում անեն:

Այսօր Շաբաթ է, ասում եմ ինքս ինձ, հաւանաբար, Շաբաթ եւ Կիրակի օրերին չեն աշխատում, իսկ Մարիետայի գալիս է Հինգշաբթի... չէ՛, չէ՛, չեն հասցնի...: Այնուամենայնիւ գանգահարիւր Հենրիկ, ինչ որ մի ներքին ձայն ասում է ինձ, եւ ես արագօրէն, բՉՎայիտով հեռաձայնում եմ Իւայի տուած համարով.

Այո՛, բարեւ ձեզ, լսում եմ..., ասում է մի հաճելի ձայն, որից դժուար չէ ենթադրել, որ միւս ծայրում խօսողը երիտասարդ օրիորդ է:

Աղջիկս, ասա խնդրեմ, գորգ լուսանալու ընկերութիւնի՞ց է, կարո՞ղ եմ պատուէր տալ:

Այո՛՜Հայրիկ ջան, բարեհաճօրէն տոնով ասում է աղջիկը, բայց այսօր տղաները չեն աշխատում: Շաբաթ օրը միայն առաքման օր է, պատուէրներն են բաժանում պատուիրատուներին: Դէ՛, գիտէք էլի, Կիրակին էլ հանգստեան օր է: Դուք Երկուշաբթի գանգահարէ՛ք՝ ես ձեր պատուէրը կ'ընդունեմ, եղա՛ւ հայրիկ:

Բայց ինձ շատ շտապ է պէտք աղջիկս, քանի՞ օր յետոյ պատրաստ կը լինի իմ պատուէրը:

Ամենաշուտը եօթութ օրից հայրիկ ջան, շա՛տ գործ ունենք, իսկ եղանակներն էլ այս օրերին այնքան էլ բարենպաստ չեն:

Ի՞նչ կապ ունի եղանակը գորգ լուսանալու հետ..., քանի որ այսքան բարեկամաբար զրուցում ենք իրար հետ, ասա խնդրեմ աղջիկս քո անունը:

Անուշ է իմ անունը հայրիկ ջան, Անուշ:

Անուշ ջան, շատ անուշ էլ խօսում ես: Աղջիկս, մի բան ասացիր՝ ես շատ չհասկացայ: Ի՞նչ կապ ունի գորգ լուսանալը եղանակի հետ:

Ի՞նչպէս թէ, մենք սիրում ենք բաց օդում, արեւի տակ չորաց-

նել գորգերը, իսկ անձրեւօտ եւ ցուրտ եղանակին՝ յատուկ, Եւրոպայից բերուած վառարանների մէջ ենք չորացնում:

Հասկացայ Անուշ ջան, շատ լաւ էլ բացատրեցիր: Հիմա ուշագիւր լսիր ինձ: Գիտեմ, ժամանակդ խլում եմ, բայց շա՛տ շատ կարեւոր է ասելիքս:

Հանգիստ եղէք հայրիկ ջան, ես շատ ժամանակ ունեմ: Մարդիկ գիտեն, որ այսօր պատուէր չենք ընդունում, ըստ այնմ էլ՝ չեն անհանգստացնում:

Աւելի լաւ: Ուրեմն լսիր ինձ: Ահհրաժեշտ է, որ իմ տան գորգերն ու ուղեգորգերը լուսացուած, մաքրուած լինեն ամենաուշը Չորեքշաբթի օրը:

Ի՞րի՞նչ, Չորեքշաբթի՞..., այսինքն երկուերեք օրի՞ց..., անկարելի է հայրիկ ջան, հնարաւոր չի: Խնդրում եմ աղջիկս, ինձ մի ընդհատիր. Լսիր մինչեւ վերջ, աղաչական տոնով փորձում եմ անկարելին՝ կարելիի վերածել, գալիք Հինգշաբթի, Ամերիկայից գալիս է կինս՝ իմ «Միփան» երգչախումբի անդամների հետ՝ մասնակցելու Սեպտեմբերի 26ին կայանալիք իմ յոբելեանական երեկոյին:

Ի՞րի՞նչ, ի՞նչ համերգ, այս անգամ գարմացած հարցնում է Անուշը, ինչպէ՞ս է ձեր անունը հայրիկ...:

Ճիշդ է, ես քո հօր տարիքին եմ երեւի, բայց ինձ Մասետրօ ասա: Իմ անունը Հենրիկ Անասեան է:

Օ՛... Աստուած իմ, դո՛ւք էք Հենրիկ Անասեանը, ի՞նչ էք ասում մասետրօ: Ես ամէն օր անցնում եմ Մեծ Դահլիճի մօտով եւ ամէն օր էլ կարդում եմ ձեր աֆիշան:

Տեսա՞ր..., կը նշանակի մենք ծանօթներ ենք..., իսկ դու սիրո՞ւմ ես մաքուր, ազնիւ երաժշտութիւն:

Ի՞նչպէս չէ, ես մշտապէս յաճախում եմ Ֆիլիզամոնիա եւ օպերային թատրոն:

Ուրեմն պիտի յուսալ, որ դու կը գաս իմ համերգին, այնպէս չէ՞: Անպայման, իհարկէ:

Համարիր, որ դու երկու հրաւէր տոմսակ ունես իմ երեկոյի համար:

Չէ՛..., ո՛չ, ի՞նչ հրաւէր, ես տոմսակ կը գնեմ: Ես վատ չեմ վարձատրուում: Ես հիմա այստեղ բոլորին իրար կը խառնեմ, տնօրէնին էլ կը բացատրեմ, թէ ում պատուէրն ենք կատարելու: Կարծում եմ՝ նա իմ խնդրանքը չի մերժի: Հիմա մասետրօ, խնդրում եմ ընկալուէր կախէք, ես ձեզ ամենաուշը կէս ժամից գանգ կը տամ, ձեր հեռախօսի համարը գրանցուած է մեզ մօտ:

Լաւ, սիրելիս, ես սպասում եմ:

Կէս ժամ էլ չէր անցել, մէկ էլ՝ հեռախօսազանգ.

Ես եմ մասետրօ, Անուշը, ուրախալի լուր: Մեր տղաները համաձայնուեցին այսօր իսկ իրենց ճանապարհին անցնել ձեզ մօտ ու վերցնել ձեր գորգերն ու ուղեգորգերը:

Հիանալի..., սքանչելի է սիրելիս: Ես շատ երախտապարտ եմ քեզ:

աետրօ: Մենք ամէն ինչ

կ'անենք, որպէսզի Չորեքշաբթի օրը ձեր գորգերը ձեր տանը լինեն, միայն չափէք, թէ ընդամենը քանի քառակուսի մետր կը լինի: Իւրաքանչիւր քառակուսի մետրի արժէքն է՝ հինգ հարիւր դրամ:

Ես չգիտեմ ոնց, թէ ինչպէս, իմ գորգերն ու ուղեգորգերը հիանալիօրէն մաքրուած, նորի տեսք ստացած վերադարձուեցին ու տղաների կողմից էլ տեղադրուեցին ոչ թէ Չորեքշաբթի, այլ՝ Երեքշաբթի օրը:

Մենք ամէն ինչ արեցինք, որպէսզի մէկ օր շուտ աւարտենք ձեր գործը յարգելի մասետրօ, հեռաձայնով ասաց Անուշը, դուք լիով ժամանակ կ'ունենաք ամբողջովին կարգի բերելու ձեր բնակարանը, նախքան ձեր կնոջ ժամանելը: Չմոռանա՞ք իմ տոմսակներն ուղարկել բանուորների հետ մասետրօ, սրտաբուխ խնդուքով աւարտեց իր խօսքը՝ հեռուիցհեռու բարեկամ դարձած Անուշը:

Յոբելեանական երեկոյի աւարտին ինքս բեմից սրահ իջալ՝ ընդունելու համար մեծաթիւ մարդկանց շնորհաւորանքները: Ո՛ւր է արդեօք Անուշը, ի՞նչպէս գտնեմ նրան, որին անձնապէս չեմ տեսել, բայց աղջիկը այնպիսի ջերմ, մարդկային, բարոյական զգացումներ է առաջ բերել իմ հոգում, որ այդ անծանօթ մարդկանց մէջ միայն նրան եմ փնտռում: Մէկ էլ աչքս ընկաւ հեռուում կանգնած մի երիտասարդ գոյգի վրայ: «Անուշն է, հաստատ նա է», փորձում եմ համոզել ինքս ինձ ու շուրջիններս թողած, մանր քայլերով առաջանում եմ դէպի գոյգին: Նկատելով իմ այդ վարմունքը, գոյգն էլ գալիս է ինձ ընդառաջ:

Անո՛ւշ..., իմ լաւ աղջիկ, դու ես չէ՞...:

Այո՛, այո, իհարկէ ես եմ մասետրօ, ես եմ, ե՛ս, ու ձեռքի ծաղկեփունջը փոխանցելով կողքին կանգնած երիտասարդին, անբռնազբոս ծիծաղով փաթաթուում է ինձ ու աւելացնում, եկէք մօտենանք Մարիետային, նրա մասին էլ շատ խօսք եղաւ այսօր:

Մարիետայն էլ ընկերուհիների եւ ծաղկեփունջերի մէջ ...խեղդուած», չի էլ նկատել իմ փոքրինչ հեռանալն իրենից:

Մարջան, խնդրեմ ծանօթացիր, Անուշն է, ես քեզ պատմել եմ նրա մասին:

Օ՛..., ինչ ուրախ եմ Անուշիկ, ապրէք դուք, շնորհակալութիւն ձեր հիանալի վերաբերմունքի եւ լաւ, որակով արուած գործի համար:

Ի՞նչ էք ասում տիկին Մարիետա, դա մեր գործն է, ես եմ շնորհակալ այս հրաշք երեկոյի համար, ասաց Անուշը եւ երիտասարդի ձեռքից վերցնելով ծաղկեփունջը՝ տուեց Մարիետային եւ աւելացրեց, օ՛, կը ներէք, ես ձեզ չծանօթացրի, իմ նշանածն է՛ Միհրանը:

Ախ այդպէ՛ս..., սիրուն աղջիկ, ուրեմն սպասենք հարսանիքին, հը՛, ի՞նչ կ'ասես Անուշ ջան, արդէն ես էի:

Անշուշտ, անպայման մասետրօ, սպասում ենք ձեզ տեսնել յաջորդ տարի, դուք մեր ամենապատուաւոր հիւրը կը կինէք:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

Ղեւնդ Եւ Ուխտանէս Պատմիչներու Անգլերէն Առաջին Թարգմանութիւնները Թարգմանութիւն, Չեռագիրներ, Ծանօթագրութիւնք

«Դոկտոր Ջաւէն Արզումանեանի Ղեւնդ պատմիչի թարգմանութիւնը յստակ եւ ըմբռնելի, ճոխացած է պատմագրական եւ բնագրային ծանօթագրութիւններով որոնք բաղուած են Արեւմտեան եւ Խորհրդային Միութեան բանասիրութեան» (Անգլ.)

ՓՐՈՖ. ՐՈՔԵՐԴ ՅԻՒՍԷՆ

ԴՊԿՏ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ձոյգ Պատմագրութիւնները

Հայ մատենագրութեան յիշեալ երկու գիրքերը առաջին անգամ ըլլալով անգլերէնի թարգմանեցի ձեռագիրներու տարընթերցումներով եւ յարակից ծանօթագրութիւններով, մին 8-րդ դարու Ղեւնդ Երէց Պատմիչի արաբներու արշաւանքին յատուկ սկզբնաղբերը՝ «Պատմութիւն Ղեւնդեայ Մեծի Վարդապետի Հայոց», եւ միւսը 10-րդ դարու Ուխտանէս Եպիսկոպոսի երկհատորեակը՝ «Պատմութիւն Հայրապետաց եւ Թագաւորաց Հայոց» եւ «Բաժանում Վրացի Հայոց»: Երկու հեղինակներու անգլերէն գիրքերը երկու հրատարակութիւններ ունեցան եւ զնահատուկեցան յատկապէս ամերիկեան եւ եւրոպական ակադեմիական հաստատութիւններէն:


Ղեւնդ Պատմիչի Երկը

Ութերորդ դարու պատմիչ Ղեւնդ Երէցի գիրքը արաբներու նախնազոյն արշաւանքներու մասին է ի Հայաստան 643 թուականէն սկսեալ, զոր հրատարակած է Կարապետ Եգեան 1887 թուին Ս. Բեդբերբերգի մէջ, քննական ուսումնասիրութեամբ Ստեփան Մալխասեանի: Սոյն հաւաստի եւ արժէքաւոր բնագիրն է զոր թարգմանեցի Երեւանի Մաշտոցի Անուան Մատենադարանի ԺԳ դարու թիւ 1902 լիակատար ձեռագրին տարընթերցումներով: Թարգմանութիւնս հրատարակուեցաւ 1982 եւ 2007 թուականներուն:

Ղեւնդ պատմիչ կարեւոր մասամբ որպէս ականատես պատմագրած է դէպի Մերձաւոր Արեւելք եւ ի Հայաստան կատարուած արաբական արշաւանքներու 156 տարիներու դէպքերը՝ 632 թուականէն սկսեալ մինչեւ 788: Ղեւնդի երկը նախապէս թարգմանուած է ֆրանսերէնի 1857 թուին, եւ ռուսերէնի՝ 1862 թուին: Եգեանի հրատարակութիւնը կը մնար միակ հաւաստի եւ վաւերական բնօրինակը գրեթէ լման դար մը որմէ օգտուած են հայագէտ բանասէրները, ֆրանսերէնն ու ռուսերէնը անբաւարար նկատելով:

Հիմնական Բնագիրները

Իմ կատարած քննարկումները ցոյց տուին որ Կ. Եգեանի 1887 թուի հրատարակութիւնը հիմնուած է երեք օրինակներու վրայ, Յովհաննէս Վարդապետ Շահնազարեանի ֆրանսերէն թարգմանութեան, առաջին 12 գլուխները պակսող թերի ձեռագրի մը, եւ ԺԳ դարուն գրուած թիւ 1902 կարեւորագոյն ձեռագրին զոր 1976-ին ինքս տեսած եմ Երեւանի Մատենադարանին մէջ, եւ որուն լուսանկար ժապաւենը Փրոֆ. Լեւոն Խաչիկեանի արտօնութեամբ Ֆիլատելֆիա բերելով կատարած եմ իմ աշխատանքը: Երկրորդ հիմնական ձեռագիր օրինակը եղած է Մատենադարանի թիւ 3070 հատորը, ընդօրինակուած թիւ 1902 ձեռագրէն, որ նախապէս պատկանած է Թիֆլիսի Կարապետ Եպս.



Բագրատունիին զոր Մալխասեան օգտագործած է Եգեանի հրատարակութեան համար:

Ներածական

Ներկայ անգլերէն թարգմանութիւնը ընդարձակ ներածականով մը կը բացուի, անգլերէն եւ հայերէն «Քննութիւն Բնագրի» վերնագրերին տակ ուր ցուցակագրած եմ ինը (9) ձեռագիր բնագրիները յիշատակարաններով միասին, բոլորն ալ բխած ԺԳ դարու վերոյիշեալ ձեռագրէն, տալով Ղեւնդի պատմագրութեան ներկայիս գոյութիւն ունեցող բնագրիներու ցանկը: Բնագրէն անմիջապէս ետք քննական եւ գիտական լիակատար ծանօթագրութիւններ աւելցուցած եմ 46 էջերու մէջ աղբիւրներու մանրակրկիտ նշումներով՝ հայերէն, արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն աղբիւրներու հիմամբ:

Գնահատանք

Փրոֆ. Րոքերդ Հիւսըն (Հիւսէնեան) գրած է թարգմանութեան նախաբանը յայտնելով որ Արեւմտեան Եւրոպայի Ղեւնդ Երէցի ժամանակակից պատմագրութիւնը չէ տուած ա՛յն ինչ որ Ղեւնդ ընծայած է Միջին Արեւելքի պատմագրութեան, եւ թէ ներկայ անգլերէն թարգմանութիւնը եղած է «յստակ եւ ընթեռնելի, ճոխացած պատմագրական եւ բնագրային ծանօթագրութիւններով»:

Հայրենի յայտնի արաբագէտ հեղինակ Արամ Տէր Ղեւնդեան առաջինը եղաւ գրախօսական գրողը «Էջմիածին» ամսագրին մէջ, յայտնելով թէ «երկար ընդմիջումից յետոյ Ղեւնդի «Պատմութիւն»ը 1982 թուականին մէկ տարուամբ երկու հրատարակութիւն ունեցաւ՝ անգլերէն թարգմանութիւնը հեռաւոր Ատլանտեանի Ֆիլադելֆիայում, եւ աշխարհաբար՝ Հայաստանի ոստանում», վերջինը՝ Տէր Ղեւնդեանի կողմէ: Իր գնահատումով «Ղեւնդի բնագրի անգլերէն լեզուն հարթ է եւ հարազատօրէն արտայայտում է բովանդակութիւնը», նշելով նաեւ որ «հայերէն աղբիւրները գրեթէ ամբողջովին օգտագործուած են տարբեր հարցերի պարզաբանման համար»: Պատմագէտ Մարտիրոս Գալուսեան եւս գրախօսականներ գրեց Ղեւնդի եւ Ուխտանէսի թարգմա-

նութեանց մասին:

Արբիւրներ

Իմ գրած յառաջաբանին մէջ հաստատած եմ որ Ղեւնդ Երէցի «Պատմութեան» աղբիւրները եղած են 7-րդ դարու Սեբէոս Եպիսկոպոսի «Պատմութիւն ի Հերակլին», եւ նոյն դարու Անանիա Շիրակացիի վերագրուած «Աշխարհացոյց»ը, ինչպէս նաեւ Աստուածաշունչ Մատենանը եւ յունարէն վաւերագիրներ, ցոյց տալով միանգամայն Ղեւնդի յաջորդող պատմիչներէն թովմա Արծրունիի եւ Ասողիկ Տարոնացիի կողմէ Ղեւնդի երկին օգտագործուած ըլլալը: Երկու պարագաներուն ալ Ղեւնդի երկին համապատասխան նմոյշ հատուածները դէմ դիմաց տրուած են որպէս օրինակներ:

Համընդհանրու Ծագումը

Համընդհանրու համընդհանրու մասին արեւելահայ անծանօթ մը գրեք էր թէ «նրանց ծագումը թրքակա՞ն է թէ հայկական, ինչո՞ւ եւ ե՞րբ են եկել համընդհանրը եւ ո՞ւր են գնացել, մինչ այժմ հնարաւոր չի եղել այս հարցերին ոչ մի պարզորոշ պատասխան տալ»: Կարդացի եւ զարմացալ երբ անանուն այս յօդուածագիրը շեշտակի կրկնելով իր հարցումը յայտնի կը դարձնէր որ 8-րդ դարու մեր Ղեւնդ Պատմիչի Համընդհանրու տուեալներու մասին գաղափար իսկ չունի: Մինչդեռ կանխազոյն եւ ամենէն հաւաստի մեր պատմիչը իր վերջին 42-րդ գլուխը համընդհանրուն կը յատկացնէ որպէս գտարիւն հայեր եւ ոչ երբեք «Ռիզի Հեմըն եւ Չամըլ Հեմըն բնակավայրերուն հետ» պղտորելով ինչ-

պէս կ'ենթադրէ գրութեան հեղինակը: Յիրաւի, Ղեւնդ պատմիչի վերջին գլուխը ամբողջութեամբ յատկացուած է Համընդհանրու անոնց «ծննդոց»ը կը կարդանք Համընդհանրու 12,000 հայերու այր, կին ու երախաներ, որոնք դէպի Սեւ Մովու արեւելքը գաղթեցին՝ գլխաւորութեամբ Ամատունի տոհմէն հայր եւ որդի իշխաններու՝ ՇԱՊՈՒՀ եւ ՀԱՄԱՄ Ամատունիներու:

Ղեւնդ պատմիչ յստակ կը գրէ թէ դէպի Համընդհանրու հայր հայերը հիմնեցին ՀԱՄԱՄԱ-ՇԷՆ (Համընդհանրու) գաւառը զայն անուանելով իշխանագուն Համամի անունով: Հայաստանէն գաղթը եղած է արաբ ոստիկան Ուպայտուլլայի Հայաստան արշաւելէն ետք 788 թուին, երբ հայեր ստիպուած թողուցին իրենց այգիներն ու անասունները եւ փախան: Պատմիչի հաւաստումով «Հայեր թողուցին իրենց երկիրը եւ գաղթեցին Յունաց կողմը թիւով 12,000 առաջնորդութեամբ Շապուհ եւ Համամ Ամատունիներու եւ պաշտպանութեամբ Ամատունեաց զօրքին»: Ղեւնդի հնագոյն տուեալներով 789-790 թուականներուն Համընդհանրու կը հիմնուի Սեւ Մովու հարաւ-արեւելեան Սպեր գաւառի հիւսիսը, ձորոխ գետի հովիտին մէջ:

«Ի ԳՈՒԷՆ ԽԱՔԻՐԻԹԵՐԱՅ»

Ղեւնդի պատմագրութեան մէջ տարօրինակ «խաթիր լիթբերայ» բառը գործածուած է խազարներու թագաւորի բանակին առնչութեամբ, եւ բանասէրներ զայն որպէս յատուկ անուն կարդա-

Շար.ը էջ 15



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE ◦ DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS ◦ WEAPON CHARGES
- DRUG OFFENSES ◦ SEX CRIMES
- THEFT CRIMES ◦ GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.



LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com
135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801

CALL FOR A FREE CONSULTATION
626.386.8606

ԱՆՈՒՄԱՆ ԾՈՐԸ ՄԱՏՈՅԵԱՆԻ ՔԱՂՅՐ ՈՒ ԲԱՐԻ ՅԻՉԱՏԱԿԻՆ

«Ոչ ոք ըսաւ սա տղին,
Պատուէնք սիրտը տրտմագին,
Նայինք ինչեր գրուած կան...
Հոն հրդեհ կայ, ոչ մատեան»
Պետրոս Դուրեան



Ուրբաթ, Մարտ 11, 2022-ին
Կրկնաձևի մէջ ինքնաշարժ վարած
պահուէն, սրտի կաթուած կ'ունենայ
եւ շատ կարճ ժամանակուայ մէջ,
մինչեւ շտապ օգնութեան հասնիլը,
արդէն Ողբ. ձորձին սիրտը դադ-
րեցաւ բաբախելէ եւ մեզմէ յաւէտ
բաժնուեցաւ մեր թանկագին ընկե-
րը, խոր ցաւ պատճառելով իր
ազնուաբարոյ տիկնոջ՝ Տիկ. Անա-
հիտ Հայրիկեան-Մատոյեանին, գա-
լակներուն՝ Արամին եւ Հայկին
հանդերձ ընտանեօք, քոյրերուն,
անոնց գալակներուն եւ ընտանիք-
ներուն եւ բոլոր հարազատներուն,
իրենց ծանօթներուն ու մանաւանդ
Հայկի Կիրիկեան վարժարանի հին
եւ նոր սաներուն եւ այս վարժա-
րանի ԱՄՆ-ի մէջ գործող Շրջա-
նաւարտից Միութեան անդամնե-
րուն:

Մօտ քսան հինգ տարի աշխա-
տած ենք միասին ԱՄՆ-ի մէջ,
անոր անակնկալ բաժանումը խո-
րապէս ցնցեց մեզ, բառ եւ խօսք
չունինք նկարագրելու համար մե-
զի հասած ցաւին տարողութիւնը
եւ խորութիւնը:

Հանգուցեալը գալակն է Հայկ-
պի հանրածանօթ ազգային, հասա-
րակական գործիչ, ջերմ հայրենա-
սէր Արամին եւ վեց պատուական
(չորս աղջիկ եւ երկու տղայ)
գալակներու մայր Մարի Մատոյ-
եանին:

ձորձ Մատոյեան ծնած էր

Հայկ 1952-ին: Յաճախած է Հա-
լկի Կիրիկեան վարժարանը, ապա
Կիրիկեան ճեմարանը: Անկէ ետք
անցած է Հայաստան հոն հետեւած
է Երեւանի Պետական Համալսարա-
նի ճարտարագիտական դասըն-
թացքներուն եւ 1980-ին արժանա-
ցած է Մագիստրոս MA ճարտարա-
գիտութեան մէջ: Երեւանի մէջ կը
ծանօթանայ Պարսկաստանէն ժա-
մանած Երեւանի Պետական ճար-
տարագիտական (Architect) բաժնի
ուսանողուհի՝ Անահիտ Հայրիկեա-
նին հետ, որուն հետ կ'ամուսնանայ
եւ կը բախտաւորուին իրենց առա-
ջին մանչ գալակով Արամով, իսկ
երկրորդ գալակը Հայկը Հայկպ
ծնած է:

Ուսումը ստանալէ ետք Հայկ
կը վերադառնայ հոն ինք եւ իր
տիկինը 1980-1993 աշխատած են
Իքարտա միջազգային ընկերու-
թեան մէջ:

1993-ին Հանգուցեալ ձորձը
ընտանեօք ԱՄՆ կը փոխադրուի:

Հոս գալէն իվեր արտակարգ աշ-
խուժութեամբ կը ծառայէ իր ըն-
տանիքին եւ ազգին ու մանաւանդ
մեր յաւիտենական Հայրենիքին եւ
Ամերիկայի Ժողովուրդին:

Հոս սեփական առեւտուրով կը
գրադէր, ապա մտաւ Լոս Անճելըս
Գալաուի ընկերային ծառայութեան
բաժնի մէջ (L.A. County Depart-
ment of Social Service), Ժողովուր-
դին առողջապահական եւ զանա-
զան ձեւի նիւթականով օգնող բաժ-
նին մէջ:

Այս պատասխանատու գործին
կողքին, ան կը հիմնէ Շինարարա-
կան իր ընկերութիւնը եւ տարիներ
շարունակ այդ ընկերութեան մի-
ջոցաւ զանազան շինարարական
գործեր կատարած է:

Ողբ. ձորձ Մատոյեան ԱՄՆ
հասնելուն պէս անմիջապէս միա-
ցաւ եւ մաս կազմեց Հայկի Կիրիկ-
եան վարժարանի Սանուց Միու-
թեան: Հոն քանի մը տարի վարչա-
կան ըլլալէ ետք, վերջին 8-10
տարիներուն իրեն վստահած էին
այս Միութեան ատենապետութեան
պաշտօնը: Մեզի մօտէն ծանօթ
ըլլալով այս Միութեան գործունէ-
ութիւնը, միշտ ալ մեծապէս գնա-
հատած ենք ԱՄՆ-ի մէջ ապրող
Կիրիկեան վարժարանի Սանուց
Միութեան պատուաբեր ծառայու-
թիւնները իրենց մայր դպրոցին եւ
Հայկի կրթական հաստատութեանց
անխտիր օգնելով, գլխաւորու-
թեամբ Ողբ. ձորձին:

ձորձին գնահատանքի մեծա-
գոյն ծառայութիւնը կը հանդիսա-
նայ Լոս Անճելըս գալաուի մէջ
գործող հայերու միութեան մէջ իր
նպաստը բերելով:

Ինչպէս գիտենք Լոս Անճելըս
գալաուր (L.A. County) տասը միլի-
ոնէն աւելի բնակչութիւն ունի: Այս
գալաուին մէջ 84,000 պաշտօնեայ
կ'աշխատի, որոնց մօտ 11,000 պաշ-

տօնեաները հայեր են: Այս գալա-
ուին մէջ աշխատող հայերը միու-
թիւն մը ունին, որ շատ մեծ գործ
կը կատարէ հայ մշակոյթը, հայու-
թիւնը, Հայ Դատը ծանօթացնելու
եւ Սրբադասուած նահատակներու
յիշատակը ոգեկոչելու, ամէն տարի
Ապրիլ 24-ին հրաւիրելով պետա-
կան բարձրաստիճան գործիչներ
հայերուս հետ ոգեկոչելու մեր ան-
մահ նահատակներուն յիշատակը:

Նմանապէս ամէն տարի Սեպ-
տեմբեր 21-ին Լոս Անճելըս գալա-
ուին մէջ կը նշուի Հայաստանի
վերանկախացման տարեդարձը: Այս
գոյգ ձեռնարկներուն եւ հայկական
միջոցառումներուն մէջ իր մեծ
նպաստը կը բերէ մեր սիրելի ձորձ
Մատոյեանը, որուն համար միշտ
ալ արժանացած է հայ պաշտօնեա-
ներուն ամենաջերմ գնահատան-
քին:

Հանգուցեալ ձորձ Մատոյեա-
նը ոչ միայն եզակի էր իր բարե-
կիրթ վարքուբարքով, մարդկային
ազնուագոյն նկարագրով, իր ունե-
ցած հարուստ պաշարով: Ան ամէն
ինչի մասին, ամէն նիւթի մասին
կրնար ժամեր խօսիլ եւ տեղեկու-
թիւններ տալ: Անոր համար էր որ
մենք ձորձ չէինք կանչեր իրեն, այլ
մեզի համար անոր անունը (Google) էր:
«Մարդ կայ հազար կ'արժ
Հազար մարդ կայ որ մէկ մարդ
չեն արժեր»

ձորձ Մատոյեանին մեկնու-
մով ԳԼԽԱԳԻՐ բարեկամ կորսն-
ցուցինք:

Ճիշդ ասոր համար է, որ սրտի
մղկտումով ու ցաւով պիտի յիշենք
մեր շատ սիրելի ձորձը, Աստուծոյ
խնդրելով եւ աղօթելով, որ երկնքի
արքայութեան արժանի ընէ մեր
այս ազնիւ ընկերոջ հոգին:

Յիշատակն արդարեւն օրհ-
նութեամբ եղիցի:
ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

ԳԻՆՐԻՆ ԵՎ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄՈՆ ԵՎ ՄԱՐՍԱՆԸ ՊԻՍԻ ՅՈՋԱԿՈՒԻՆ ՔՈՅՐ ՔԱՂԱՔՆԵՐ



Ֆրանսայի մէջ ՀՀ դեսպան
Յասմիկ Տոյմաճեանը, Մոն տէ
Մարսանի քաղաքայեւ Շառլ Տա-
յոյի հրաւերով, Մարտ 21-ին մաս-
նակցեցաւ եւ ելուցի ունեցաւ Մարտ
21-էն Ապրիլ 3-ը Մոն տէ Մարսանի
մէջ «Երազ» խորագրով Հայաս-
տանին նուիրուած երկշաբաթեայ
փառատօնին պաշտօնական բաց-
ման:

Պաշտօնական արարողութեան
ներկայ էին Մոն տէ Մարսանի
քաղաքայեւ Շառլ Տայօն, «Լէ
Լանտ» բաժանմունքի խորհուրդի
անդամներ, Մոն տէ Մարսանի Կաս-
քոն թատրոնի տնօրէն, փառատօնի
նախագահ Անթուան Կարիէլը,
ֆրանսահայ թատերագիր, դերա-
սան, «Մոլիէր» թատերական մրցա-
նակի քառակի դափնեկիր Սիմոն
Աբգարեանը:

Իր ելուցի մէջ դեսպան Տոյ-
մաճեանը ողջունեց Մոն տէ Մար-
սանի քաղաքային իշխանութիւն-
ներուն ջանքերով կազմակերպուած
եւ հայկական մշակոյթն ու պատ-
մութիւնը քանի մը տասնեակ մի-
ջոցառումներով ներկայացնող երկ-
շաբաթեայ փառատօնը, որ աւան-
դական ֆրանսահայ համայնք չու-
նեցող Նուվէլ Աքիթէն (Նոր Աք-
ուիթանիա) շրջանին մէջ հայ-
ֆրանսական դարաւոր բարեկա-
մութեան նոր կամուրջ մը կ'աւելց-
նէ՝ սեփական նպաստը բերելով
Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ
առանձնաշնորհեալ յարաբերու-
թիւններուն շարունակական ամ-
րապնդման:

Երկշաբաթեայ տեւողութեամբ
«Երազ» փառատօնին ծիրէն ներս
նախատեսուած են, մասնաւորա-

պէս, Սերկէյ Փարաճանովի տուն-
թանգարանի ցուցանմուշներուն,
Ֆրանսահայ քանդակագործ Թորոս
Ռաստ-Կլանի ստեղծագործութիւն-
ներուն, ֆրանսահայ լուսանկարիչ
Անթուան Ակուճեանի ցուցադրու-
թիւնները, ճագ-դաշնակահար Տիգ-
րան Համասեանի, ֆրանսահայ թաւ-
ջութակահար Աստղիկ Միրանոս-
եանի, «Լատանիա» երաժշտական
համոյթի, դաշնակահարուհի, ճագ-
երգչուհի Մաշա Ղարիպեանի ելուցի-
ները, ֆրանսահայ թատրոնի եւ
ֆիլմի գործիչներ Սիմոն Աբգար-
եանի, Ռոպէր Կէտիկեանի, Նորա
Մարտիրոսեանի, Սերժ Աւետիք-
եանի, Լեոն Մինասեանի հեղինա-
կած եւ անոնց մասնակցութեամբ
ֆիլմերու ցուցադրութիւնները,
«Երազ» պարային համոյթի, ֆրան-
սահայ գրող, դերասանուհի Կորին
Չարգաւաճեանի թատերական ներ-
կայացման ցուցադրութիւնը, ինչ-
պէս նաեւ հայ մշակոյթի, պատմու-
թեան, Արցախի հիմնահարցի եւ
2020 թուականի 44-օրեայ պատե-

րագմի աշխարհաքաղաքական մար-
տահրաւէրներուն վերաբերեալ կլոր-
սեղաններու կազմակերպում՝ Ֆրան-
սայի մէջ Արցախի Հանրապետու-
թեան ներկայացուցիչ Յովհաննէս
Գէորգեանի, պատմաբան, քաղա-
քագէտ, հայագէտներ՝ Ժան-Փիլեո
Մահէի, Ժերար Տէտէեանի, Ռեմոն
Գէորգեանի, Ժերար Շալեանի, Կայծ
Մինասեանի, Տիգրան Եկաւեանի,
լրագրող, գրողներ Վալերի Թո-
րանեանի, Ժան-Քրիստոֆ Պուիսո-
նի, Սիլվէն Տըսոնի, Միշէլ Օնֆրէի,
Եւրոպական խորհրդարանի ան-
դամ Ֆրանսուա-Չալիէ Պելամիի
մասնակցութեամբ:

Ապրիլ 2-ին Մոն տէ Մարսա-
նի մէջ տեղի պիտի ունենայ Գիւմ-
րի քաղաքին կողմէ Մոն տէ Մար-
սանին նուէր ընծայուած հայկա-
կան խաչքար-ցայտաղբիւրի պաշ-
տօնական բացումը, որուն ընթաց-
քին համապատասխան համաձայ-
նագրի մը ստորագրմամբ՝ Գիւմ-
րին եւ Մոն տէ Մարսանը պիտի
հռչակուին քոյր քաղաքներ:

ԳՈՐԾԱԻՈՐ ԿՈՒԶՈՒԻ
Փաստատուութիւն մը կարիքը ունի
աշխատող օրիորդներու եւ տիկիներու
Անգլերէն իմանալը պայման է
Մանրամասնութեան համար հեռաձայնել
Տիկ. Անահիտին (818) 266-5838 թիւին:

ՄԱՐԱԶԴ



ՄԱՐԻԱ ՖԱՐԱՀ ԵՈՂՈՒՐԹՃԵԱՆ (Ծննդյան 22 Դեկտեմբեր 1940, Լիբանան)

Սրտի դառն կսկիծով կը գոժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝ ՄԱՐԻԱ ՖԱՐԱՀ ԵՈՂՈՒՐԹՃԵԱՆի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 2 Մարտ 2022-ին, Լոս Անճելըս, Քալիֆորնիա:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 13 Ապրիլ 2022-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, Պրայենք (3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504), ապա թաղման կարգը պիտի կատարուի Ֆորեսթ Լոն Հոլիվուտ Հիլզի գերեզմանատան մէջ (Forest Lawn Memorial Park - Hollywood Hills, 6300 Forest Lawn Dr, Los Angeles, CA 90068):

- Սգակիրներ՝
Չաւակները՝
Տէր եւ Տիկին Ճորճ եւ Արփի Ամիրեան եւ դուստրերը՝ Ախտա եւ Լարա
Տէր եւ Տիկին Արա եւ Սօսի Եողուրթճեան եւ զաւակները՝ Յարութ եւ Լորի (Պոսթոն)
Տէր եւ Տիկին Արմէն եւ Հերմինէ Պչաքճեան եւ զաւակները՝ Մարիա, Կարին եւ Արման Արեգ (Մոնթրէալ, Քանատա)
Տէր եւ Տիկին Հրաչ եւ Աստղիկ Սեփեթճեան եւ դուստրերը՝ Լորի եւ Փաթիլ
Եղբայրները՝
Ֆարահ Ֆարահ ընտանիք (Լիբանան)
Ժողէֆ Ֆարահ ընտանիք (Լիբանան)
Միշէլ Ֆարահ ընտանիք (Լիբանան)
Ժոնի Ֆարահ ընտանիք (Լիբանան)
Քոյրերը՝
Օլիակե Թանիոս Նմըր ընտանիք (Լիբանան)
Լորիս եւ Եոսէֆ Խրէյշ ընտանիք (Լիբանան)
Ժորժէթ եւ Յովհաննէս Տէմիրճեան եւ ընտանիք (Մոնթրէալ, Քանատա)
Ֆլումինա եւ Սայիտ Տիպալ եւ ընտանիք (Լիբանան)
Լորէթ եւ Միշէլ Էլ-Մըր եւ ընտանիք (Լիբանան)
Լուսի եւ Մարուն Սատէր եւ ընտանիք (Լիբանան)
Ռոզ եւ Միշէլ Սատէր եւ ընտանիք (Լիբանան)
Էմմալի եւ Միշէլ Հապպուպ եւ ընտանիք (Լիբանան)
եւ համայն Եողուրթճեան, Ֆարահ, Մածունեան, Թելֆէճեան, Ամիրեան, ձիւեան, Պչաքճեան, Սեփեթճեան ընտանիքներ ու հարազատներ:

Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել Լիբանանի ՀԲԸՄ-ի վարժարաններուն, հետեւեալ կապով՝ https://donate.agbu.org/lebanon_schools_educators - In memory of Maria Farah Yoghourtjian

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ ԱՐԱ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆի մահուան տխուր առթիւ (Լիբանան) մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի եղբօր՝ Տէր եւ Տիկ. ընկ. Նորայր Խաչատուրեանին, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկ. Միհրան Խաչատուրեանին եւ Տէր եւ Տիկ. Սեւակ Խաչատուրեանին:
«Մասիս»

Եղիշէ Չարեանց - 125 -

Շարունակուած էջ 11-էն

Օտար մարդիկ հայիոյցին ու անցան: Միայն պոռնիկը մշուշուն համբուրեց եւ խելագարը բարեւեց կիսածայն: Մեր անցեալը՝ ինչպէս որ էր՝ Պատմութեան քառուղիներով մենք քայլել ենք երկար՝ Անդէկ, ցաքուցրիւ, անգաղափար, Գին դարերից մինչեւ այս հանճարեղ մերկան, Ուր հուրիւրատուն է մեր դէմ գալիքնափայլ: Ազգային սնապարծութեան դէմ՝ Ինչ խօսքերով երգեմ եւ ինչ տեմոյով պատմեմ Մեր անանցեալ անցեալը, մեր ընթացքը, որ էլ Ո՛չ մի գուսան երգով չոգեկոչի հին փառքը Ու կարօտով անմիտ ետ չնայի,- Չպանծանայ այլեւս, որ առանց մեզ աշխարհը Կը լինէր պարտեզ մի ամայի...

Անցեալն արտացոլող սլաքներ՝

Ապա առաջնորդել են մեզ տարիներ երկար Արքաներ անժողովուրդ եւ գահագուրկ, Որոնց փառքը՝ մեր հին մատեաններում երգած՝ Եղել է եղկութիւն ու բճնութիւն քու:- Եւ՝ Իշխաններ անփառունակ, սին ըղձերի ճորտեր, Դո՛ւք, որ դարեր երկար, հազարամեակներ, Ուրուների մամ անկերպարանք Ապրել էք ու կանգնել օդէ ապարանքներ, Օտար խարոյկներից հայցել ոգու կրակ,- Ե. Չարեանցը գրեց՝ դաստիարակելու, ուղղորդելու եւ միտքեր դարբնելու համար: 125 տարի առաջ ծնաւ Կարսի մէջ, բայց մնաց անգերեզման... չէ՞ որ զաւակն էր «եղկ», «քծնող» եւ «քու» ժողովուրդի՝ իր իսկ բառերով: «ԱՐԱՐԱՏ» ՕՐԹԵՐԹ

Գիրքերու Աշխարհ

Շարունակուած էջ 11-էն

մաքուր տպաւորութիւն աւելցնեմ, որ գրելու եւ ներկայացնելու ձեւը նորոյթ ըլլալով հանդերձ, մտերիմ ալ է: Արդ, հարիւրաւոր ասուածքներէն՝ այս օրինակը, բաւարար է արդէն ընդհանուր կարծիք մը կազմելու գրքոյկի մասին: «Հէր կիւզէլլիկ պի արատա պուլունմազ»: Ամէն գեղեցկութիւն միատեղ չի գտնուիր: Այսինքն, մարդը միշտ կատարեալ չըլլար:

Պէտք է ըսել, որ գրքոյկի իւրաքանչիւր էջ, իր հմայքն ու որոշ պատգամը ունի: Անկասկած, ընթերցողը հաճոյքով պիտի ըմբռնէ: Էականը այս բոլորէն ետք, փոխանցել եւ տարածելն է: Չմոռնանք սակայն, որ նոյնքան կարեւոր է հայ գրողը քաջալերելը: Այս եւս մեր մշակութային առաքելութիւնն է: Ի սրտէ կը շնորհակտորենք հեղինակ՝ Գեորգ Լ. Քէօզկէրեանը, ու անպայման վարձքը կատար կ'ըսենք, յուսալով որ շուտով այս հատորը ունենայ նաեւ իր յաջորդն ալ: Ապրիս: Գրիչդ դալար:

Ղեւոնդ Եւ Ուխտանէս Պատմիչներու

Շարունակուած էջ 13-էն

ցեր են, իբր թէ՛ զօրագունդը ենթակայ էր խաթիրլիթբեր անուն զօրավարին: Մինչդեռ անմիջապէս նախորդող բառերը արդէն կուտան զօրավարին իսկական անունը՝ «Ռաթթարխան, ի գնդէն խաթիրլիթբերայ»: Հաւանաբար ձեռագիր օրինակները չէ որ սխալ գրած են, այլ առաջին հրատարակիչները որոնք «Խ» գիրը գլխագիր գրելով բառը վերածեր են յատուկ անունի: Մինչդեռ այս աղաւաղուած բառը իմ կարծիքով թրքական

ծագում ունեցող երկու, «խաթիր-լի» եւ «թապուր», բառերու միացումն է որ կը նշանակէ «յարգելի, ազդեցիկ» եւ «թապուր» որ բանակ կը նշանակէ, ինչպէս «քիւվեթ-լի» (զօրաւոր) եւ «պերեթեթ-լի» (օրհնուած) բառերը: Ուրեմն նախադասութիւնը թարգմանուելու է «Ռաթթարխան՝ ազդեցիկ բանակի գունդէն»: Այս բացատրութիւնը կարեւոր կը նկատեմ մեր հնօրեայ պատմագիրին պարագային, ինչպէս պատահած են ուրիշ պատմագրութեանց մէջ եւս: Այս մէկը սակայն մինչեւ օրս յայտնի չէր դարձած:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services
From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Հայաստանի Հրաձիգները Նորվեկիոյ Սեշ 7-րդ Ոսկին Նուաճեցին



Նորվեկիայի Համար քաղաքին մէջ ընթացող հրաձիգութեան եւրոպայի առաջնութեան մրցումներուն վերջին օրը հայ հրաձիգները նուաճեցին հերթական երկու մետալները: Թիմային միջքս, 20+20 կրակոց վարժութեան, յաղթող դուրս եկան Գոռ Խաչատրեանն ու Գոհար Յարութիւնեանը:

Յովհաննէս Մարգարեան-Լիլիթ Մկրտչեան զոյգը ընդամենը մէկ կէտով 2-րդ տեղը գրաւեցին:

Հայաստանի հաւաքականը, որ հանդէս եկաւ 12 մարզիկներով, ընդհանուր նուաճեց 10 մետալ՝ 7 ոսկի եւ 3 արծաթ:

Լիլիթ Մկրտչեանը 10 մ վազող թիրախ, նորմալ վազք, 30+30 կրակոց կանանց պայքարին խոցելով 561 կէտ, դարձած է ախոյեան: Նոյն վարժութեան Գիւմրիի մարզադպրոցի մարզուհի Արուսեակ Գրիգորեանը 557 կէտով գրաւած է 2-րդ տեղը եւ արժանացած արծաթէ մետալի:

Տինա Կարապետեան-Սիմոն Սեմեկալ Հայկական Ձոյգը 14-րդն Է Աշխարհ Սեշ



Ֆրանսայի Մոնպելիէ քաղաքին մէջ աւարտեցաւ գեղասահի աշխարհի առաջնութիւնը:

Պարային զոյգերու եզրափակիչ փուլ մտած Տինա Կարապետեան-Սիմոն Սեմեկալ հայկական զոյգը ազատ ծրագրին գրաւեց 13-րդ տեղը, սակայն երկու ծրագրերու արդիւնքներով ի վերջոյ առաջնութիւնը աւարտեցաւ 14-րդ հորիզոնականով: Ձոյգը ընդհանուր հաշուարկով վաստակեցաւ 170.32 կէտ:

Հ.Մ.Ս. Յաղթանակով Սկսաւ Տարին



Փասատինայի Հ.Մ.Ս.ի ֆուտպոլի առաջին խումբը Կիրակի, 27 Մարտ, 2022ին առաւօտեան ժամը 8:00ին Rio Los Angeles դաշտին մէջ իր առաջին մրցումը ունեցաւ San Guentín F.C. խումբին դէմ:

Հ.Մ.Ս.ի մարզիկները արձանագրեցին առաջին յաղթանակը 4-2 հաշուով: Անոնց յաջորդ խաղը L.A. Rising F.C.ի խումբին դէմ է, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 3 Ապրիլ, 2022ի առաւօտեան ժամը 8:00ին Salesian High School-ի դաշտին մէջ, 960 S. Soto Street, Los Angeles, CA 90023:

Նորանոր յաղթանակներ կը մաղթենք Հ.Մ.Ս-ի խումբին:

Գանատա Հասաւ Աշխարհի Բաժակի Աւարտականին. Ամերիկա Եւ Մեքսիքա՝ Ունին Մեծ Հաւանականութիւն

Ֆուտպոլի Աշխարհի Բաժակի Հիւսիսային եւ կեդրոնական Ամերիկաները, ինչպէս նաեւ Գարիպեան կղզիներու երկիրները ընդգրկող՝ Concacaf-ի մրցաշարքի գտումներուն գծով Գանատայի հաւաքականը 4:0 արդիւնքով պարտութեան մատնելով ձամայքային, հասաւ Աշխարհի Բաժակի աւարտականներուն, որոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ Նոյեմբերին՝ Քաթարի մէջ:

Միացեալ Նահանգներու ազգային խումբ 5:1 արդիւնքով յաղթելէ ետք Փանամային գրեթէ ապահոված եղաւ իր տոմսը՝ դէպի Քաթար: Մրցաշարքի վերջին խաղին ԱՄՆ պիտի մրցի Քոսթա Ռիքայի դէմ այս վերջինի դաշտին վրայ: Քոսթա Ռիքա, որ երեք կէտ ետ է Ամերիկայէն, պէտք է յաղթէ առնուազն 6 կոլի տարբերութեամբ, որպէսզի կարողանայ առաջ անցնելով գրաւել խմբակի 3-րդ դիրքը եւ ապահովել աւարտականներու ուղեգիրը, այլապէս ստիպուած պիտի ըլլայ անցումային խաղեր կատարել Նիւ Ջեյքստայի հետ:

Վերջին մրցումին Մեքսիքա իր հողին վրայ պիտի հիւրընկալէ Սալվատորին եւ պէտք ունի միայն հաւասարութեան՝ հասնելու համար Աշխարհի Բաժակի աւարտականներուն:

Եւրոպայի Ախոյեանը Դուրս Մնաց Աշխարհի Բաժակէն

Տեղի ունեցան ֆուտպոլի 2020-ի Աշխարհի Բաժակի եւրոպական անցումային առաջին խաղերը:

Եւրոպայի ախոյեան իտալիոյ հաւաքականը սեփական դաշտին վրայ ընդունեց Հիւսիսային Մակեդոնիային եւ 0:1 արդիւնքով պարտուելով յաջորդական երկրորդ անգամ ըլլալով չկարողացաւ հասնիլ աւարտականներու:

Անցումային երկրորդ խաղին Հիւսիսային Մակեդոնիան մրցակիցի յարկին տակ կը հանդիպի Փորթուկալի հետ, որ ընթացիկ խաղին սեփական դաշտին վրայ 3:1 արդիւնքով յաղթեց Թուրքիային:

Կիսաեզրափակիչ փուլի արգելքը յաղթահարեց նաեւ Շուէտի ընտրանին, որ հիւրընկալեց Չեխիային եւ յաջեց 0:1 արդիւնքով:

Եզրափակիչ խաղին Շուէտի հաւաքականը կը հանդիպի Լեհաստանի հետ, որու առաջին հանդիպումը չկայացաւ, քանի որ անոր մրցակից՝ Ռուսաստանը որակագրկուած է ՖիՖԱ-ի կողմէ:

Ափրիկեան Գօտի Ընտրական Փուլի Անցումային Խաղերու Արդիւնքները

Ֆուտպոլի Աշխարհի Բաժակի ափրիկեան գօտիէն ներս տեղի ունեցան անցումային (փլեյ-օֆֆ) առաջին հանդիպումները, որոնց ըմբացքին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Քամերուն - Ալճերիա՝ 0:1
- Մալի - Թունիզ՝ 0:1
- Եգիպտոս - Սենեկալ՝ 1:0
- Կանա - Նայճերիա՝ 0:0
- Կոնկոյի ԴՀ - Մարոք՝ 1:1

Պրագիլի Յաղթանակը՝ 4:0

Աշխարհի Բաժակի հարաւ-ամերիկեան գօտիի ընտրական մրցաշարի 17-րդ հանգրուանին Պրագիլի հաւաքականը Ռիօ Տէ Ժանէյրօի մէջ ընդունեց Չիլիի խումբը եւ յաղթեց 4:0 արդիւնքով: Աչքի ինկան Նեյմարը, Վինիսիուս Ճոնսիորը, Ֆիլիպէ Կոուտինիօն եւ Ռիչարլիսընը: Աւարտականի ուղեգիրը նուաճած Պրագիլը, որ 42 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, Չիլին 7-րդն է՝ 19 կէտով:

Ուրուկուէյի հաւաքականը ընթունեց Փերուի խումբին եւ յաղթանակի հասաւ 1:0 արդիւնքով: Ուրուկուէյ 25 կէտով չորրորդ տեղը կը գրաւէ: Նոյնքան կէտ ունի երրորդ տեղը ընթացող Էքուատորի հաւաքականը, որ 1:3 արդիւնքով պարտուեցաւ փարակուէյցիներէն:

Էքուատորն ու Ուրուկուէյը ապահովեցին եզրափակիչ մրցաշարի ուղեգիրը: Ընտրական մրցաշարի աւարտին մնացած է մէկ հանգրուան: Հարաւ-ամերիկեան գօտիի 17-րդ հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Պրագիլ - Չիլի՝ 4:0
- Ուրուկուէյ - Փերու՝ 1:0
- Փարակուէյ - Էքուատոր՝ 3:1
- Քոլումբիա - Պոլիւիա՝ 3:0

Հայաստանը Յաղթեց Մոնթենեկոյի

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականը յաղթանակով սկսաւ 2020 մրցաշրջանը:

Հայաստանի հաւաքականը Երեւանի «Հանրապետական» մարզադաշտին վրայ ընդունեց Մոնթենեկոյի եւ առաւելութեամբ հասաւ 1:0 արդիւնքով:

Առաջին խաղակէսի 19-րդ վայրկեանին դիպուկ հարուածով աչքի ինկաւ Վահան Բիչախչեանը: Մնացած ժամանակին Հայաստանի հաւաքականը ստիպուած էր պաշտպանուել պահպանելու համար նուազագոյն առաւելութիւնը: Ի վերջոյ, մեծ ջանքերու օգնութեամբ անառիկ պահուեցաւ սեփական դարպասը:

Հայաստանի հաւաքականը ինը անջող խաղէն յետոյ վերջապէս կարողացաւ յաղթանակ տանիլ: